




Ա. ԶԱՓՈՒԶՑԱՆ

Ա. ՄԻԳՈՒՐԻՆ



ՅՈՒՐՎԵԼԻԱՆ



1935



ՏԵՐԵՎԱՆ

634
—
34-31

09 JUL 2013

19825

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽԱՅԱ ՍՆՈՒՆԴԱՐԴՔՈՂԿՈՄԱՏ—ՀԱՅԿՈՆՍԵՐՎԱԾԹԵԱ
ՊՏԱԼԱ-ԲԱՆԶԱՐՄԲՈՒՇԱԿԱՆ ԶՈՆԱԼ ԿԱՅԱՆ

634

34-3

У. Р. З У. Ф И К З У. В.

48

Ի. Վ. ՄԻԶՈՒՐԻՆ

1

四〇一

1009
39512



• 1935 •

88888888

24 SEP 2010

Նվիրում եմ պտղաբուժու-
թյան շեֆ՝ Հայաստանի Ա.Ե.Բ.Բ. Կանչը

կոմիտեի միուրյան:

Ա. ՅԱ. ՓՈՒԶՅԱՆ

0105 932 15

Պատ. իմբազիք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



«ՄԵՐ բ թուրյառնից վազումաւրյաւն չեմ կտրապ
աղտօնել, նշանից այդ վերցնելը—մե՞ր խնդիրն ես:
Բ. ՄԻՇՈՒՆԻՔ



Այնքան հրապուրիչ են փայլփում՝ ծառերի վրա գեղատես-
ութիւն, հասուն, դեղին ու կարմրացնուց խնճորները, դեղնավուն հյու-
թակից տանձը, բալի խոչքը, մուգ-կարմիր պառւզները. համնում
և ընկույզը, կանաչին են տալիս խաղողի ծանը, հակինթաշար
վողկույզները սեպտեմբերին՝ Միջուրինի սքանչելի բազմառատ
այդում:

Հենց այդտեղ՝ 53 աստիճան հյուսիսային լայնության գոտում, ամառը հասնում ե ծիրանը, կեռասը, խոշորահատիկ մորենին, յելակը—մի խոսքով հարավը փոխադրվել ե հյուսիս, Մուկվայի տակ:

Բայց չկ վոր վոչ մի քարտեղ մինչեւ այժմ ցույց չի տվել,
վոր խաղողի ու ծիրանի տարածված մշակության հյուսիսային
սահմանը Հարավային Ուկրաինայից ավելի հյուսիս անցնի: Վոչ
մի բուսագիտ չի խիզախել Մասկովյի, Ռյազանի տակ մշակել
ձմեռվա տանձենիներ, կեռասենիներ, ընկույզենիներ:

Հակառակ ընության քմահաճույքին, Միջուրինի տնկարանում այդ բոլոր բույսերն աճում են հիանալի կերպով. և վոչ միայն աճում, այլ և առատ պտուղ են տալիս:



Այդտեղ կան նաև այնպիսի բույսեր, վորոնք աշխարհում վոչ մի այլ տեղ չեն աճում վոչ միայն հյուսիսում, այլև հարավում, բույսեր՝ վորոնք ծնվել են հենց այնտեղ, տնկարանում և այլ հայրենիք չունեն: Դրանք հիբրիդներն են, վոր ստացել և Միջուրինը՝ տրամախաչելով իրար հետ տարրեր բռւյսերը: Իրենց շատ լավ են զգում այդ հիբրիդները՝ ստացված բարի ու կեռասի, ծիրանի ու սալորի, մորու և յելակի և ուրիշ ջատ բռւյսերի տրամախաչումից: Յեկայդ այդ բոլորն այժմ՝ Միջուրինի աշխատանքի վաթուուներորդ տարում:

1874 թվականն ե... հյուսիսի զմնդակ պայմաններին գեռ ծանոթ չելին պտուղների լավագույն սորտերը, բացի միքանի սորտ խնձորից, ամառվա տանձից, մեկ-յերկու սորտ բալից, մամուխից:

Այդ եր հյուսիսի այն ժամանակվա խղճուկ ասորտիմենտը՝ ինչու այդքան աղքատ ե հյուսիսը պտղատու մշակություններով: Ինչու հյուսիսի կլիմայական խիստ պայմաններում խաղող, ծիրան, զեղձ ու նուշ չեն աճում: Ինչու խնձորենին պտղու և տալիս վոչ թե յերրորդ, այլ 10-րդ, 15-րդ տարում: Ինչու մի շարք վայրերի պտղատու բռւյսեր ամեն տարի այնքան առատ պտղու են տալիս անդամ հյուսիսում, ցրտից, հիվանդությունից չեն վախենում, իսկ մեր կուլտուրական ծառերի մեծ մասն այնքան հեշտությամբ վնասվում ե սառնամանիքից, հիվանդություններից և այնքան կարճատե և նրանց կյանքը:

Ահա թե ինչի վրա յեր մտածում Միջուրինը, վորը վաթուուն տարի առաջ աշխատում եր այն ժամանակվա Ռյազան-կողով յերկաթուղում:

Նա մտածունքի մեջ ընկավ... և յերկաթուղային ժամանակությունը սլաքը սխալմամբ մի ժամ առաջ տարավ... Յերկաթուղու վարչությունից խիստ հանդիմանություն ստացավ:

Սակայն բնության միջ բռւսական աշխարհը, առանց մարդու մասնակցության, գանդաղորեն կազմավորվում եր միլիոնավոր տարիների ընթացքում: Մարդը հետո սովորեց ընտրել նրանից ամենաարժեքավորը, այն, ինչ վոր հարկավոր ե, և մտցնել կուլտուրայի մեջ: Յեկայդ ավելի նպաստավոր են կլիմայական ու հողային պայմանները, այնքան հարուստ, բազմապիսի յեն բռւսական ձևերը, վորքան ավելի հեռու գնանք դեպի հյուսիս, այնքան աղքատ ու սակավատեսակ են դրանք: Զեերի այդ

ճոխությունը և նրանցից ընտրություն կատարելը գեւ քիչ են ոգնում մարդկանց:

Իսկ մեզ, մեր տնտեսական նպատակների համար անհրաժեշտ ե վոչ միայն ընտրել գոյություն ունեցող բռւյսերից լավագույնները, այլև կատարելագործել դրանք, վերափոխել, այն ել վոչ թե յերկար հաղարամյակների ընթացքում, այլ ամենաակարծ ժամանակամիջոցում: Մարդը գիտե հարկադրել բռւյսերին, վոր նրանք հաշվի առնեն իր պահանջները: Նա գիտե պահանջնորեն, տնտեսության պահանջներից յելնելով, ավելի կարծ ժամանակամիջոցում ստեղծել նորանոր բռւյսերը նա գիտե զարերը տարիների վերածել, իսկ ամբողջ եպոխանքները՝ տասնամյակների:

Պաղատու բռւյսերի նման ձեւափոխման աշխատանքներից մեկն սկզբեց վաթուուն տարի առաջ՝ կողլով կոչվող խուլ քաղաքի տներից մեկի ցանկապատում:

* *

1874 թվականին Ռյազանի նահանգի Պրոնսկիյ գավառից կողլով փոխադրվեց դեռ քսանամյա յերկատասարդ Միջուրինը Միջնէ այդ նա սովորում եր Ռյազանի գիմնազիայում, սակայն միջոցներ չունենալով հարկադրված եր առանց դասընթացն ավարտելու, ինքնուրուույն կյանք սկսել Կողլովում նա աշխատանքի մտավ յերկաթուղու կայարանը, վորպես ապրանքային գրասենյակի կոնտորչիկ: Նա ինայողություն անելով եր ամենաանհրաժեշտ կարիքների վրա, իր սուղ միջոցներով ձեռք բերեց մի փոքրիկ հողամաս և մինչև 1880 թվականը վճարում եր հողի պարտքը, յուրաքանչյուր ամիս տալով իր փոքրիկ աշխատավարձի մի հինգերորդ մասը: Նա գնում ե սերմեր ու տնկիներ, և այդ ժամանակներն ել սկսում ե իր փորձնական աշխատանքը: Պարտեզն այդ ընատնիքի հրապույրի առարկան եր: Նրա հայրն եւ պապն ել, պապի հայրն ել պարտիզականներ են յեղել:

Միջուրինը դեռ մանուկ հասակից տեսնում եր գյուղատեսական աշխատանքները հոր պապի հայրը Տամբովի նահանգում ցանելով կուլտուրական տանձի սերմեր՝ ստանում եր տանձի նոր սորտեր: Այդ տեսակները հայտնի յեն «Միջուրինյան տանձեր» անունով:

Իվան Վլադիմիրովիչ Միջուրինն աշխատելով յերկաթուղում պտղաբուծությանը նվիրում եր միայն իր պատ ժամերը և իր ամբողջ փոքրիկ աշխատավարձը: Նա չեր կարող հույս դնել նաև հորից ողնություն ստանալու վրա, վորովհետեւ ամուսնացել եր

Կողլովի մի համեստ քաղքենունու հետ և զրկվել ժառանդությունից իրա նրա հորը պատկանող ամբողջ հողը, նրա մահից հետո, վեցը եյին պարտքի դիմաց: Յերիտասարդ Միջուրինն ամեն տեղից սերմեր եր բերել տալիս, ձեռք եր բերում հսկայական քանակությամբ գյուղատնտեսական ամսաթերթեր, գրքեր, պատրաստում եր այգեպանական գործիքների մողելներ և միենույն ժամանակ, յերբ ժամացույցին շատ քիչ մարդիկ եյին ծանոթ, պարապում եր ժամանակությամբ: Նա իր սեփական նախաձեռնությամբ, առաջինը կաղմել եր կողլով կայարանը ելեկտրոնսանքի միջոցով լուսավորելու նախագիծը:

Յեկ չնայած ճշգրիտ մեխանիկայի ասպարիզում իր ունեցած հաջողության, Միջուրինն այդ ասպարիզում հաշակավոր չդարձավ, ինչպես և հայտնի այգեպործ ամերիկացի Լյուտեր Բերբանկը, վորն այն ժամանակ աշխատում եր կալիֆորնիայի յերկաթուղում: Յերբ իվան Վլադիմիրովիչ Միջուրինը Ռյազան—Ուրալի յերկաթուղում լարում եր յերկաթգծի ժամացույցը, Բերբանկը կալիֆորնիայի յերկաթուղում ստուգում եր կայարանի կշեռքը: Այդ պահին այդ եր ընդհանուրը ի. Միջուրինի և Բերբանկի միջև:

Միջուրինը հացով ու ջրով պահպանելով իր գոյությունը՝ ամբողջ սուղ աշխատավարձը ծախսում եր տնկիներ գնելու վրա, տնտեսելով յուրաքանչյուր կոսեկը: Նա ստանում եր բազմաթիվ հիանալի հարավային բույսեր, ծայրեցայր լցնում եր գրանցով իր փոքրիկ պարտեղը և յերբեմն թվում եր, թե հարավի քնքուշ տնկիներն ընտելանում են հյուսիսային ցրտերին, վարժվում են ապրել նաև հյուսիսում: Սակայն առաջին խոկ խստաշունչ ձևանը փափկառուները վոչնչանում եյին, խոկ ավելի կայունաերը քիչ եյին տարբերվում տեղականներից իրենց պտուղների վորակով, և... բոլոր հույսերը կրկին փշվում եյին:

Տունկերը փշանում եյին մեկը մյուսի յետերից, խոկ Միջուրինը շարունակում եր ամեն տարի բերել տալ նորը և կրկին սկսում եր փորձերը:

Նա ուսումնափրում եր գոյություն ունեցող գյուղատնտեսական գրականությունը, գեղոտանիկան ու պաղարուծությանը վերաբերյալ աշխատությունները, կուտակում եր դիտելիքներ, վորոնք ամրապնդվում եյին գործնական աշխատանքով:

Յեկ տասը տարի անց՝ Միջուրինի տան փոքրիկ պարտեղն արդեն նեղվածք եր նրա աշխատանքի համար, ուստի նա իր


ընտանիքի անդամների ոգնությամբ, իր բոլոր տնկիները փռականություն ե կողլովի տակ գտնվող մի նոր հաղամաս:

Նշանակում ե՝ բույսերի սոսկ փոխադրումը հարավից գետի հյաւսիս՝ չի լուծում հյուսիսի այգեգործությունը բարելավելու հարցը, և Միջուրինը նորից մտածմունքի մեջ ե ընկնում:

— Հարկավոր ե վոչ թե պայմանները հարմարեցնել բույսի պահանջներին, այլ սորտը հարմարեցնել միջավայրի խիստ պայմաններին—համոզվում և Միջուրինը:

Սակայն չկար այնպիսի մեկը, վորից Միջուրինը կարողանար սովորել նոր սորտեր ստանալու վարպետությունը, այն ինչ բնության մեջ ցեղերի ու տեսակների ամբողջ բաղմաղանությունն առաջ և յեկել յերկար ժամանակի ընթացքում: Նշանակում ե՝ պետք և ուսումնափրությունը, լուծել նոր բույսեր ստեղծելու հանելուկը, պետք և սովորել ամենակարև ժամանակամիջոցում նոր սորտեր կերտել:

Պահանջվեց տասնյակ տարիների համառ աշխատանք—և Միջուրինը գտավ նոր սորտեր ստեղծելու գաղտնիքը:



10

Ա Ե Յ Յ Ո Լ Ի Ծ Ա Ն Բ
Պ Ա Յ Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Մ

Ի բ աշխատանքի առաջին տարիներին, յերբ Միչուրինն զբաղված եր պտուղների սերմերից նոր սորտեր ստանալու աշխատանքով, նրան հաջողվեց ապացուցել, վոր կուլտուրական ըույսերի սերմերը ցանելով ևս յերբեմն հաջողվում ե ստանալ կուլտուրական սորտեր, ինչպես հաստատվեց բալի վրա նրա կատարած աշխատանքով։ Դա հերքեց հին այգեգործների այն պընդումը, թե պտղատուների բոլոր ցեղերից եւ սերմով բազմացնելիս, միշտ ստացվում են վայրի ձեեր, Այժմ, յերբ կուտակվեցին գիտականորեն ստուգված բազմաթիվ ավյանները, վորոնք հաստատեցին, թե պտղատուների կուլտուրական շատ ցեղեր հնարավոր ե բազմացնել սերմերով, ծիծաղելի յե թվում այն ժամանակվա շատ այգեգործների տրադիցիան, և Միչուրինը 1886 թվականին, իր առաջին հոդվածն ուղարկելով «Ռուսական այգեգործություն» ամսաթերթի խմբագրությանը, հաղորդեց այդ կարևորագույն յերևույշթի մասին։

Ամսագրի լմբագիր դոկտոր Գրելլը, վորը բացասական վերաբերմունք ունիր կուլտուրական տունիկիր սերմով բազմացնելու գործին, Միշուրինի ձեռագրի վոա մահապահ։

«Զի տպվի—մենք զետեղում ենք միայն ճշմարտությունը»:
Յեվ այդ ճշմարտությունն ել այգեգործների մեջ արմատացած
տրաղեցիան, ամեն տեսակ նոր փաստերի նկատմամբ գոյությունը
ունեցող ճահճացած, կանխակալ կարծիքը:

իսկ Միջուրինն արդեն ստեղծել եր մոտ մի տասնյակ սե-
փական սորտեր, վորոնց մեջ կային բալի այնպիսի սորտեր-
ինչպիսիք են՝ սերմերի ցանքից ստացած «Տանձակերպը», «Տրու-
վորը» և այլն: Փաստեր, վորոնք չեր ընդունում «Առևական այ-
դեգործության» խմբագրությունը:

Գեղործության խմբագրությանը
Անցյալ դարի 90-ական թվականներին, յերբ Միջուրինը
տեսական հսկայական աշխատանք կատարելով և ձանոթանալով
Ռուսաստանի այգեգործությանը, սկսել եր նոր սորտեր առաջ-
բերել բույսերի մասսայական ընտրության միջոցով, նա արգե-
ռուներ իրենց վորակով ու հատկություններով լավագույն բալե-
նու մի քանի սորտեր Այդ սորտերն ևս չճանաչված մնացին
Ռուսաստանում, մինչև վոր ամերիկացի պրոֆեսոր Մեյերը, այ-
ցելելով 1890 թվականին Միջուրինին, Ամերիկա տարավ նը-
րալի հաշակավոր սորտ՝ «Միջուրինի պտղալիետը», մի քանի այլ
նույնպիսի գերազանց սորտերի հետ միասին:

Այդ ժամանակները սպավան «Յայնպոթության» գումարության և բանջարաբուծության լրատու» ամսաթերթում բուծության և բանջարաբուծության լրատու» ամսաթերթում լույս տեսավ մի ամբողջ հոգված Միջուրինի սահցած սորտերի մասին՝ նրանց համառոտ նկարազբությամբ, և Ամերիկայի հյուսիսային նահանգների հողագործության դեպարտամենտը Ռուսաստան գործուղեց Վաշինգտոնի Գյուղատնտեսական Խնամիտության կիրեկտոր՝ ամերիկացի հոչակավոր պտղաբույժ պրոֆեսոր Մեյերին, հանձնարարելով նրան մանրամասնորեն ծանոթանալ Միջուրինի աշխատանքներին:

Պրոֆեսոր Մելքըն հափշտակված էր Միջուրինի ցույց ազատ սիրալիք ընդունելությունից, Նա մանրամասնորեն ծանոթացավ Նրա աշխատանքին, Ամերիկա փոխադրեց Միջուրինի մոտ 15-ամյա բալենիներից, խնձորենիներից, վորոնց թվում նաև գեղագործ մենալ «Մելքոնիս» գնացանոց Անտոնովկան»։ Յեղ կանադայում,

«Որտեղ կլիմայական խիստ պայմաններում ցրտահար ելին լինում պտղատուների ամերիկյան սորտերը, Միջուրինի սորտերը, մանավանդ «Պատղավետ» բալը, ամբողջովին անվտանգ մնացին նույնիսկ 1892 թվականի ավերիչ, ցրտաշունչ սառնամանիքին:

Ամերիկան դեռ այն ժամանակ ավելի լավ եր ճանաչում Միջուրինին, քան իր սեփական որիգինատոր—պտղաբույժ Բերսանկին: Ռուսաստանի այն ժամանակվա լավագույն այգեգործներից մեկը՝ Կաշկարովը «Պրոցեսսիվ այգեգործություն և բանշարաբուժուն» ամսագրում զբել եր՝

«Վերջերս յես առիթ ունեցա խոսելու Ամերիկայի Միացյալ Նահանգների հողագործության գեպարտամենտի լիազոր Մեյերի հետ և խոսակցության ժամանակ շոշափեցի Լ. Բերբանկի գործունելությունը: Պարոն Մեյերի ասելով, Բերբանկը վոչ հետեղականություն ունի, վոչ մասնագիտություն: Նրա ամբողջ աշխատանքն ինչ վոր քառոյցին բնույթ և կրում: Ամեն մի առաջ յեկած նոր բան խիստ դադանի յե պահպում, և Լ. Բերբանկն ավելորդ և համարում մանրամասնություններ հաղորդել այցելուցին: Ճիշտն ասած, Բերբանկը քիչ և կիրառում հիբրիդացումը, և նա վորոշ նպատակ չի առաջարկում: Նա նախ և առաջ աշխատում է ապշեցնել պտուղների կամ ծաղիկների վիթխարիչափով: Արդարեւ մի քանի բույսեր, Բերբանկի մշակության աղցցությամբ, ուղղակի անձնանաշելի յեն դարձել:

Ապա Կաշկարովը շարունակում է՝

—Պարոն Մեյերը, համեմատելով գործնական տեսակետից պ. Բերբանկին և մեր հարգելի ի. Վ. Միջուրինին, ասում ե. «Ամեն ինչ տրամադրում ե հոգուտ վերջինիս: Յեթե այլպիսի մեկն Ամերիկայում լիներ, նրան կոսկեղոծելին»: Վորքան դադանի յե Բերբանկի մոտ նոր սորտի ծագումը, այնքան բացահայտ ե այդ ի. Վ. Միջուրինի մոտ: Նա մանրամասնորեն հայտնել և յուրաքանչյուր, տեսակի ծագումը, և արտադրողի վիճակը խնդիրն են մանրամասնորեն ծանոթացնել սպառդին տվյալ սորտի արժանիքները»:



Միջուրինի այգում պարոն Մեյերը վոչ միայն տեսնում եր այդ նոր սորտերը և հիանում նրանցով, այլ և մանրամասնորեն ծանոթանում եր նրանցից յուրաքանչյուրի ծագմանը, ունորեն ուսումնասիրում եր Միջուրինի կիրառած մեթոդները: Մեյերը համոզվեց, վոր այսեղ դադանիք չկա, ինչպես Սանտա-Ռոզայում, և վորքան ամեն ինչ թագուն ե Բերբանկի մոտ, այնովայում, և վորքան ամեն ինչ թագուն ե Բերբանկի մոտ:

Ճիշտ ե, Բերբանկը ևս իր գործի հմուտ վարպետն եր. ինչպիսի բույսի վրա յել աշխատեր՝ լիներ այդ բանջարանացային, թե դաշտային, պտղատու, թե զեղորատիվ—նա մեծ համառությամբ եր առաջ տանում գործը՝ նրանց վերափոխման ուղղությամբ, և շատ հաճախ նրան այդ հաջողվում եր:

Բերբանկը կարողացավ ստեղծել բազմաթիվ ծաղիկներինորանոր հրաշալի ձեվեր, ինչպիսիքն են՝ շղուշանիք բազմազան տեսակները, սկսած սպիտակ և վառ դեղին գույներից մինչև մուգ կարմիք ծաղիկներ ունեցող ձևերը: Նրան հաջողվեց ստանալ յերկնագույն վարդի և պուտի սքանչելի ձեվեր:

Մեծ աշխատանք ե կատարել Բերբանկը պտղատու կուլտուրաների նորանոր սորտեր ստանալու ուղղությամբ: Մեծ հաջակ ե ստացել «Բերբանկի սալորենին», վորի պտուղները կորիզ չունե-



ԼՅՈՒՏԵՐ ԲԵՐԲԱՆԿ

(սաղմը չփարդանում)։ և վորը, սակայն, հաջող կերպով բաղմացվում ե առանց սերմերի՝ պատվաստի միջոցով։

Հայտնի յե Բերբանկի ընկուղենու «Պարագուկ» սորտը, վորն աճում ե շատ արագ և իննը տարեկան հասակում հասնում ե 50 տարեկան ընկուղենու մեծության, ունի գեղեցիկ, գեկորատիվ տեսք, բայց պտուղ չի տալիս։ Նա նատացել է ընկուղենու մի այլ սորտ ևս, վորի պտուղներն ունեն այնքան բարակ կեղեւ, վոր կարելի յե փշը ձեռքով։

Բերբանկն ունի մի սքանչելի նոր բույս ևս՝ դա նրա կակտուսի նոր տեսակներն են։ Կակտուսն անապատային պայմաններում աճող բույս ե, վորի տերեկները ձևափխված են փշերի իսկ տերեկի դերը ջլատարում ե կանաչ, հյութալի ցողունը, վորը սման ե ճառանձին հաստ տերեկների շարանին։ Ցողունի վրա ծաղկում են գեղեցիկ ծաղիկներ, վորոնցից սացվում են խոտը,

հյութալի պտուղներ։ Շոգ, անապատային պայմաններում այդ միակ բույսը հրաշալի, հյութալի կեր և ներկայացնում անասունների համար, սակայն նա պաշտպանված է խոշոր փշերով։ Բներբանկը կարողացավ ստանալ կակտուսի տեսակներ՝ առանց փշերի, միանդամայն պիտանի վորպես կեր, և այդ բույսերը ներկայումս Ամերիկայի անապատային պայմաններ ունեցող մասերում տարածված են հսկայական չափերով։ և կազմում են անասնապահության հիմնական կերի բաղան։

Բերբանկն աճեցնում եր նոր ձեվի բույսերը և սերմերից ընարությամբ, և տարբեր բույսերի փոխագարձ փոշոտուժից սացված սերմերով։ Նա մեծ քանակությամբ փոշոտումներ ե կատարել մորիի և մաշի միջն, փոշոտել և մորին յեւակի, անդամինձորենու, տանձենու, վարդենու փոշիների հետ, սակայն այդպիսի փորձերից կիսառնակ սերմեր չեն ստացվել։

Բերբանկն ևս, ինչպես և Միջուրինը, այդպատճարիզում սկսեց իր աշխատանքն առանց դրամական միջոցների, սեփական նախաձեռնությամբ, բայց բավական շուտով նա մեծ հաշակ ձեռք բերեց՝ շնորհիլ իր ստացած «Բերբանկ» կոչված կարտոֆիլի սորտի, վորը փերմերների կողմից սիծ գնահատանքի արժանացագ՝ շնորհիլ իր բարձր բերքատվության և պալարների կլոր ձեի։

Հետագա տարիներում ևս Բերբանկն ստիպված եր իր աշխատանքը հարմարեցնել տիրող փերմերային միջավայրին, կապիտալիսական պայմանների մրցման պահանջներին։ Պետք եր տալ նոր բույսեր յեղած սորտերից տարբեր իրենց ձևով, գույնով, աճեցողությամբ, վորոնք տիրող մեծության ասպարեզում պետք ե հաղթող հանդիսանային։

Ահա այդպիսի բույսեր եր բուծում լյուտեր Բերբանկն Ամերիկայի զարդացած կապիտալիզմի միջավայրում։

Սակայն, ճանաչելով Բերբանկի տված անմիջական նվաճումները, ամերիկյան միջավայրը չեր ճանաչում նրա առաջավոր, հեղափոխական գերը նոր ձեր բույսեր ստանալու ասպարեզում։ Բերբանկը բացարձակ կերպով համարում եր իրեն Դարվինի ուսմունքի հետեւողը և հրաժարվում եր իր աշխատանքի եյությունը բացատրել կրոնական պահանջների համապատասխան։ Բերբանկի ամբողջ աշխատանքը խփում եր կրօնին, փշրում նրա հիմունքները բուսական աշխարհի զարգացման մասին, վորի պատճառով նա իր հայրենիքում մեծ արհամարհանքի արժանացագ։ Բերբանկը չփոխեց իր այդ հայացքները մինչև մահը։

1897

թվին Ամերիկայում կայացալ հանադայի ֆերմերի և մասնագետ պտղաբույծների միացյալ համագումարը, վորտեղ պրոֆեսոր Սառենդերսը նշեց, վոր բոլոր յեվրոպական և ամերիկյան պտղատու բույսերը կանադայում ցրտահարվեցին, բացառությամբ բալի «Պտղավետ» տեսակի, վորը բերված և Կողևից: Նույն համագումարը շատ բարձր գնահատական տվեց այդ սորտին, մինչդեռ Ամերիկայի շովինիստները, կատարած այդ համագումարի վորոշումներից, զրկեցին պրոֆեսոր Սառենդերսին համալսարանի ամբողջի վարիչի պաշտոնից, պահանջելով բալի այդ սորտը համարել տեղական՝ ամերիկյան:

Զնայած դրան, «Միջուրինի պտղավետ»-ը մնում և վորակես բալի միակ աշխարհահռչակ սորտը, վորը և՛ շատ բերքատու յե, և՛ ցրտադիմացկուն, և՛ հրաշալի, համեղ պտուղներ ունի. այդ սորտը վաղուց տարածված և ամբողջ կանադայում վորպես առաջնակարգ սորտ Մեղ մոտ նա հրաշալի յե աճում և՛ Ամուլնսկում, և՛ վոլոգդայում, և՛ այլ հյուսիսային յերկրներում:

Ամերիկայի հողագործության դեպարտամենտի գործիչներն այն ժամանակ զգում ելին, վոր կողլովում ձեվակերպվում, զարգանում ելին աշխատանքի նոր մեթոդներ, վորոնք կոգնեն նորանոր բույսեր ստանալու գործին:

Յեկ շատ շուտով Միջուրինն ստանում և Ամերիկայից մի գեղեցիկ ծրար, վորի մեջ նույնպիսի գեղեցիկ հրավիրատում գրված եր.

«Փորձեր կաղմակերպելու համար ձեզ՝ ընդարձակ տնկարաններ



Միջուրինան քերքառ

կհատկացվեն զանագան լայնություններում, ինչպես ցույց կառք դուք: Տնկարաններում կառքավորվեն այնպիսի լաբորատորիաներ, ինչպիսիք անհրաժեշտ կհամարեք Դուք: Զեզ կտրվեն այնքան բանվորներ, ողնականներ, աշակերտներ, վորքան կպահանջնեն աշխատանքի թափն ու ծավալը: Զեր տնորինության կհանձնվի, վորպես սեփականություն, մի շոգենավ: Ռուսաստանից կփոխադրվեն ձեր բոլոր բույսերը, ամրող գույքը՝ այն ամենը, ինչ վոր մատնացույց կանեք գուք: Զեզ հնարավորություն կտրվի բույսեր ձեռք բերել յերկրագնդի բոլոր անկյուններից: Յեզ ձեզ անձամբ կտրվի 8000 գուար ոռնիկ:

Յեզ չնայած նրան, վոր Միջուրինը վոչ մի ոժանդակություն չեր ստանում ոռւսական կառավարությունից, կիսաքաղց գրության մեջ հազիվ եր պահպանում իր ընտանիքի գոյսւթյունը, նա շարունակեց աշխատել այդ ծանր միջավայրում:

Վաճառել իր աշխատանքի արդյունքները, վորոնք ձեռք եյին բերված յերկարատե, համառ ջանքերով, զրկանքի ու արհամարանքի ծանր պայմաններում—նա չհամաձայնեց:

Ամերիկյան կառավարության կողմից Միջուրինին ուղարկված առաջարկը հայտնի զարձավ ոռւս ցարական գործիչներին, և հանկարծ ոռւս կառավարության կողմից Միջուրինին այցելելով մի գնդապետ՝ առում ե.

— Զեզ, պարոն Միջուրին, ամերիկյան զեպարտամենտն ունարկել ե մի առաջարկ, բայց . . . բայց Դուք հաշվի կառնեք, վոր հայրենասիրությունը, աղքային զգացմունքները Զեզ չեն թույտ տա թողնել Ռուսաստանը . . .

— Յես մտադիր չեմ Ամերիկա մեկնել,—ասաց Միջուրինը, — բայց վոչ թե հայրենասիրության պատճառով. յես չեմ կարող վաճառել իմ յերկարամյա զրկանքներով ձեռք բերած աշխատանքի արդյունքները, կշարունակեմ աշխատել նույն զրկանքների պայմաններում:

Վորպես հակակի Ամերիկյայի առաջարկին, շատ շատով Միջուրինն ստացավ յերկու շքանշան ցարական կառավարությունից, վորոնցից մեկը՝ «Յ-րդ աստիճանի, սուրբ Աննայի անվան»: Միաժամանակ նրան առաջարկեցին հողագործության զեպարտամենտում չինավնիկի պաշտոն:

Սակայն Միջուրինը հրաժարվեց ցարական կառավարության այդ առաջարկից, իսկ առաջարկը ամերիկյան կառավարության խորամանկ կողմէն գործություն կատարելու անհնարինությունից առաջարկը անփոփոխ: Յարական կողմությունը մասնաւոր անփոփոխ: Յարական



կառավարությունը վոչ մի ոժանդակություն կամ հոգատարություն չեր ցուցաբերում դեպի Միջուրինի գործունեյությունը, և արդեն ծերացած հասակում ել մեծ պաղաքույժն ստիպված եր սեփական ուժերով մշակել, խնամել իր տնկարանը: Վոչ մի հրատարակչություն լսել անդամ չեր ուզում Միջուրինի աշխատանքների հրատարակման մասին, իսկ առև չինովնիկները վորոշում ենին կայացնում բռնի կերպով գրավել Միջուրինի տնկարանը՝ այդ հողամասում քաղաքի պահանջների համար բանջարեղեն բուժելու նպատակով:

1915 թվականին Միջուրինն իր որատետրում գրում եւ Յեվ Բնչ՝ վորպես արդյունք իմ բազմամյա համառ աշխատանքի, բույսերի զատ, ըստ յերեսութին արժեքավոր, նոր սորտեր ստանալուց հետո, համարյա վոչ մի ուշադրություն հասարակության և ավելի քիչ՝ կառավարության կողմից, չնայած այդ առթիվ իմ արած բազմաթիվ դիմումներին: Իսկ նյութական աջակցության մասին խոսելն անդամ ավելորդ եւ Յեվ ահա երջ ի վերջո դորձը վոչնչանում եւ, տնկարանն անխնամ ե մնաել, նոր տեսակների յերկու յերրորդ մասը մասամբ վոչնչանում, կորչում ե՝ պատշաճ խնամք չլինելու և ազատ տեղ պակասելու պատճառով, մասամբ ել ցիր ու ցան ե յեղել մուլսաստանի ու արտասահմանի զանազան գնորդների մեջ, վորտեղից կվերադառնան մեզ մոտ այլ անուններով: Իմ յեռանդն ու առողջությունը թուլացել եւ կամաւակամա ստիպված եմ հրաժարվել իմ սիրած գործից, ու թեպետ աստիճանաբար (վորովհետև զատ տունկեր դեռ նոր են մտնում պաղատվության շրջանը), այնուհանդերձ բոլորվին վերջ տալ գործին»:

Պատերազմի ավերիչ աւարիներին հաջորդում են փետրվարյան հեղափոխության ծանր ամիսները: Ժամանակավոր կառավարության մինիստրներն արդեն վորոշել ենին ձեռք դցել կողովի մեակ հրապուրիչ կանաչաղարդ անկյունը՝ Միջուրինի հաղագյուտ տնկարանը՝ զբոսավայրի վերածելու համար:

Քաղաքացիական կափմերի ժամանակ Միջուրինի տնկարանը վոտնատակ արալ սպիտակ բանդիտների հեծելազորը, վորն իր հետ տարավ նաև տնկարանը պաշտպանող փշալարեր՝ ռազմական պաշտպանության համար: Այգում մնաց Միջուրինը բոլորվին մենակ և որ ու գիշեր պահպանում եր սեփական բուժերն ավերածությունից:


1917 թվականն եւ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորպես մի կայծակ՝ ճեղքեց մռայլ, խավարամած մթնոլորտը և աղատեց Միջուրինի այդ թանկարժեք տնկարանը վոչնչացումից:

Առաջին իսկ որերից խորհրդային կառավարությունը նշանակում ե Միջուրինին միութենական Հողմովկոմատի լիազոր սեկլցիոն աշխատանքի գծով: 1921 թվականին նրան հատկացնում են նախկին «Տրոիցիկիյ» վանքի բոլոր հողամասերը՝ փորձնում են նախկին համար: Այդ առաջին տարիներին կազմանական աշխատանքի համար, Այդ առաջին տարիներին կազմանական ամբողջ աշխատանքը կատարում եր Միջուրինի մոտ կերպչական ամբողջ աշխատանքը կատարում ընկեր Թորշյեկած, Կարմիր Բանակից նոր վերադարձած ընկեր Թորշյովը:

Նա վոտքի կանգնեցրեց տնկարանը, նոր միջոցներ ստացավ կառավարությունից, նոր հնարավորություններ ստեղծեց Միջուրինի աշխատանքների ծավալման համար: Նա մինչև այժմ ել մնում ե վորպես Միջուրինի ամենամոտ ոգնականներից մեկը:

1922 թվականին, յերբ խորհրդային յերկերը դեռ իր լարված ուժերով պաշտպանվում եր արտաքին և ներքին թշնամիների վատանգից, յերբ տիրող ռազմական պայմաններում պետք եր խնայել հացի յուրաքանչյուր կտորը, ազատել յերկերը քաղցից, տանձի, խնձորի, սոցիալիստական պաղարուծություն ստեղծելու մասին դեմքս մտածել անհնար եր . . .



ՄԻՉՈՒՐԻՆԻ ՍՏԱՑԱԾ ՀԻԲՐԻԴ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Նույն ժամանակ՝ Մոսկվայում ընկեր Լիճ ինք սեղանի վրա սազմական ձակատից ստացված տեղեկությունների հետ միասին փռված ելին հեռագրերը, վորոնք հաղորդում ելին, թե ինչքան հաց և ստանում Մոսկվան, Լենինգրադը, սազմական կենտրոնները, թե ինչպես և ընթանում պրոլետարիատի հաղթանակը բռնորդիրում... Դրությունը լուրջ եր...

Յեկամ այդ որերին Լենինը կարդաց Հարգուդի «Վերափոխված յերկիր» գիրքը, վորում հիշատակված եր տմերիկացի հոչակավոր պատարույժ Լյուտեր Բերբանկի աշխատանքների մասին:

— Բայց միթե չկան այդպիսի մարդիկ մեզ մոտ, մեր յերկում, — ասաց Լենինը գիրքը կարդալուց հետո:

Շուտով Լենինն իմացավ, վոր մենք ունենք մեր սեփական պետք հանձարեղ փորձարարը՝ նորանոր բույսեր ստեղծող Միչուրինը, վորը տասնյակ տարիների ընթացքում տվիլ ենոր բույսեր ստանալու ուղղությամբ շատ ավելի բան, քան Բերբանկը, սա-

կայն նրան թուսաստանում չգիտելին վոչ միայն լայն մասսաները, նրա մասին չգիտելին և չելին ճանաչում անգամ բռնաբանության ասպարիդում աշխատող մասնագետներից շատերը:

Լենինն առաջինն իմացավ Միչուրինի մասին, և անմիջապես, նույն 1922 թվականի փետրվարի 8-ին Տամբովի նահանգական գործկոմը Միչութենական Ժողկոմի նախագահ ստունում և հետևյալ հեռագիրը՝

«Կուլտուրական բույսերի նոր սորտեր ստանալու փորձը պետական հսկայական նշանակություն ունեն, Շտապ ուղարկեցեք զեկուցում Միչուրինի փորձերի և աշխատանքի մասին, Ժողկոմի նախագահ ընկ. Լենինին զեկուցելու համար»:

Լենինը միծ հրճանքով եր ծանոթանում Միչուրինի աշխատանքների, նրա նոր բույսերի հետ. Նա այն ժամանակ, քաղցիության որերին անգամ տեսնում եր այդ աշխատանքուների հսկայական նշանակություն ապագայի. Նոր սոցիալիստական յերկրի վերափոխման համար Յեկամանալի չե, վոր պրոցեսարիատի հանձարեղ զեկավարը հայտաբերեց Միչուրինին, կյանքի բերեց այն արժեքավորը, թանկագինը, վորն անցյալում տարիների ընթացքում կորսարի և վաշնչացման եր դատապարտված:

Հետագայումն ել Լենինը շարունակում եր հետաքրքրվել Միչուրինի աշխատանքներով. այսուհետև տնկարանն են հաճախում ընկ, կալինինը և կառավարության անդամներից շատերը:

Գետք եր տմբացնել այդ նվաճումները, պետք եր նոր հնարակություններ ստեղծել խորհրդացին յերկրի վերափոխման համար. 1923 թվականին Միչուրինի տնկարանը հայտարարվեց համամիութենական նշանակություն ունեցող տնկարան. Նույն համամիութենական թվականին Միչուրինի պտղատու սորտերի նմուշները Մոսկվայի թվականին Միչուրինի պտղատու սորտերի նմուշները Մոսկվայի համամիութենական ցուցահանդեսում հրաշալի գնահատական ստացան, և Միչուրինին արվեց բարձրագույն պարզե:

1925 թվականին տօնվեց Միչուրինի գործունեյության հիմնածյակը. կառավարությունը նրան պարզեատրեց կարմիր աստղի շքանշանով:

Այդ ժամանականից նրա փորձնական աշխատանքների բազայի վրա կազմակերպվեց Համամիութենական Սելեկցիոն Գերազանցության կայտնը, վորպես միակ նման գիտական հաստատությունը Միչուրինը մեջ, իսկ Միչուրինը նշանակվեց նրա ցմահ գիրեկտորը:

1931 թվին Համ. Կ(բ)կ կենտրոնական վեբսառագիչ Հանձնաժողովի և ԲԳՏ ժողկոմատի կողեցիայի հատուկ վորոշումներով Միջուրինի տնկարանն ապահովվեց նոր միջոցներով՝ աշխատանքներն ել ավելի ծավալելու նպատակով:

Կողովը դարձավ վոչ միայն Միության գիտահետազոտական աշխատանքի, այլև պտղաբույծ մասնագետների կազմեր պատրաստելու նոր կենտրոնը. Կողովում կազմակերպվեց Հյուսիսային Պտղաբուծության Համամիութենական կենտրոնական ինստիտուտ, վորտեղ պատրաստվում են հարյուրավոր ուսանողներ. կազմակերպվեց Համամիութենական Պաղաբուծական Գիտահետազոտական ինստիտուտ, հիմնվեցին պտղաբուծական տեխնիկում և մի շարք դյուլատնտեսական դպրոցներ. Այդ հիմնարկների ահամար տեղում կազմակերպված ե հսկայական արտադրական բազա՝ 10 հազար հեկտար տարածությամբ, վորից 6 հազար հեկտարն արդեն յուրացված ե միջութինյան սորտերով:

ԽՍՀՄ-ի կենտրոնական տարրում վորոշեց՝

«Առանձնապես աչքի ընկնող այն ծառայությունների համար, վոր մատուցել են նա հատապտուղային մշակույթների զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցող բուսական նոր ձեռք ստեղծելու բնագավառում և այդ ասպարիգում պետական նշանակություն ունեցող հատուկ աշխատանքի համար, Միջուրինին պարզեատրել Լենինի տեանով, իսկ Կողման քաղաքն անվանել Միջուրինսկ»:

Բացի տեղում կենտրոնացված աշխատանքից, Միջուրինի մեթոդները Միության սահմաններում ոգտագործվում են ավելի քան 1500 գիտահետազոտական հիմնարկներում։ Ներկայումս Միջուրինի աշխատանքներին են ծառայում տեխնիկայի վերջին խոսքով Միջուրինսկում կազմակերպված առաջնակարգ լաբորատորիաները։ Հրաշալի յեն կահավորված նրա անվան սելիկցիոն կայանում փոտոպերիոդիմի, ևնտղենիզացիայի, ուլտրամանիչակագույն ճառագայթների լաբորատորիաները, վորեղ Միջուրինի մեթոդիկայով հսկայական աշխատանք և ծավալվում նոր ձևի բույսեր ստանալու ուղղությամբ։

19-րդ դարի վերջերից Միջուրինը հանդիսանում է ամերիկյան գիտական՝ «Բրիգերս» կազմակերպության անդամ, իսկ վերջին տարիներին նա ընտրվեց Միութենական Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ. միաժամանակ նա հանդի-

սահնում և և Զեխո-Սլովակիայի Ազգաբայցին Ակադեմիայի պատ-

Միջուրինին, վորպես հանճարեղ մասնագետի, մեծ սրբով և
անսահման հավատով են ձանաշում մեր յերկրի առաջավոր մաս-
նագետներն ու միլիոնավոր փորձարարները, սակայն հակառակ
դրան, մինչ վերջերս ել մի շարք հին մասնագետներ սքողված
ձեռվ շարունակում են արհամարհական վերաբերմունքը գեպի նըա
մեծ նվաճումները. դրանց թվում են Սիմիրենկոն, Կոժուխովը և
Միքանի այլ մասնագետներ, վորոնք ծաղրանքով են արտահայտ-
վում Միջուրինի հիբրիդների մասին պնդելով, թե այդ հիբրիդ-
ները կորցնում են իրենց բարձր վորակն անսովոր պայմաննե-
րում: Նրանք արհամարհում են Միջուրինի մեթոդները՝ պատճա-
ռաբաննեպ, թե դրանք ճանաչված և գիտականորեն հիմնա-
վորված չեն: Սակայն այդ «մասնագետներն» իրենք չեն կարո-
հասկանալ, վոր Միջուրինը չի տվել ունիվերսալ բոլոր շրջան-
ների համար պիտանի պտղատու սորտեր, վոր յեթե այդ մեթոդ-
ները չեն մշակվել արտասահմանում կամ բուրժուական պրոֆե-
սորների կողմից, դա գետ չի նշանակում, վոր այդ մեթոդներ-
պիտական չեն: Չե վոր փաստ ե, վոր առաջին անգամ միայ-
Միջուրինին հաջողվեց ստանալ հիբրիդներ հետագոր աղդակե-
պտղատու բույսերից՝ ծիրանի և սալորի, բալի ու կեռասի և շա-
ռուրիշ հեռավոր բույսերի տրամախաչման միջոցով. չե վոր նրա-
հաջողվեց ստանալ ցրտադիմացկուն «Պտղավետ» բալնին, դ-
ղին ծիախոսի դիմացկուն սորտը, սեղանի խաղողի հրաշա-
սորտերը և շատ ուրիշ արժեքավոր բույսեր, հյուսիսի պայմա-
ներում—ե այդ բոլորը՝ շնորհիլ սեփական մեթոդների: Նմա-
«մասնագետները» դեպէս պետք ե հիմնականորեն վերանայ-
իրենց դրույթները՝ անցյալի ճնշող փոշուց աղատվելու համա-

Հեղափոխության առաջին տարբիմարբս առաջ և վեց տարբիմ մասնագետներից շատերը դեռ չկիտեյին Միջուրինի ու նրա աշխատանքների մասին։ Նույն տարբիներին խորհրդային յերկիրը Ամերիկա եր գործուղել հայտնի ակադեմիկոսներից մեկին՝ Գյուղագտնութեական ցուցահանդեսին մասնակցելու նպատակով։ Սակայն, վորքան մեծ եր մեր ակադեմիկոսի զարմանքը, յերբ նա հակայական ցուցահանդեսում առաջավոր գյուղատնտեսության ցուցահանդեսից շարքում գտավ բազմաթիվ ապյուսակներ ու նկարներ, վորոնք ապացուցում եյին միջուրինյան սորտերի տարածումն Ամերիկայի հյուսիսային ծայրամասում։ Կանադայում Յուն

ցահանդեսում ամերիկացիները մեծ վոգեռությամբ ելին պատմում, թե ինչպես շնորհիվ միջուրինյան և սիրիական սորտերի, նրանց հաջողվեց հազարավոր հեկտարների վրա նոր պաղաքուծական ֆերմաներ կազմակերպել այն յերկում վորտեղ բացակայել և պաղաքուծությունը:

Հարգելի ակադեմիկոսը մեծ բավականությամբ լսեց այդ մասին, ամեն կերպ աշխատելով չարտահայտել իր հետաքրքրությունը:

— Սակայն պատմեցնեք մեզ, պարոն, ձեր հանճարեղ Միջուրինի նոր աշխատանքների մասին, — դիմեցին նրան Ամերիկայի մասնագետները, անկեղծ ցանկություն ունենալով լսել մեծ պաղաքուժի նոր նվաճումների մասին:

Պատասխան տեղի չունեցավ:

— Վարքան դադանապահ եք դուք, առւօներդ, — նկատեցին ամերիկացիները, չկասկածելով, վոր մեր մասնագետը թագյունում եր դիտելիքները Միջուրինի մասին:

Մինչդեռ ակադեմիկոսն անչափ շփոթված եր, վորովհետեւ այն ժամանակ Միջուրինի մասին նա վոչինչ չգիտեր:

Ցուցահանդեսի առթիվ ամերիկացիները կազմակերպել ելին ճպի ճաշկերույթ, սեղանի վրա շատ բաղմաթիվ, գեղեցիկ մրգերի շարքում մեր՝ ակադեմիկոսի ուշադրությունը դրավեց ինձորի մի սորտ, վորի շատ խոշոր, վասկեղոծ պտուղները աչքի ելին ընկնում գեղեցկությամբ ու բուրմունքով, այդ սորտը խորհրդացին հայրենիքում տարածելու նպատակով ակադեմիկոսը ինդրեց մի քանի սերմեր ու կարոններ:

Ամերիկացիներն ուրախությամբ նվիրեցին, սակայն հայտնեցին, վոր այդ սորտը — միջուրինյան «Ֆունտուկիսանոց Անտոնիովկան» և . . .

Ահա այն ուղին, վորով ցանկապատված պարտեղը հասավ համաշխարհային տնկարանի աստհանին:



1932 թ. գարնանը մենք՝ մի խումբ ասպեքտանոներս շըր-
ջապատճեցինք Խվան Վլադիմիրովիչին այն տաղավարում, զորտեղ
նա միշտ ընդունում եր առանձնապես յերիտասարդ հուրերին:

Միջուրինը, անսահման կապ ունենալով հանդերձ խորհրդացին և ոտարերկրյա բազմաթիվ գիտնականների, կողմանտեսական հոկայական մասսաների հետ, միշտ վորոշ թերահավատությամբ և վերաբերվում նրա տնկարանն այցելող առանձին, իրեն անծանոթ անձանց։ Անսպառ եր նրա զրույցը հատկապես այն յերիտասարգության հետ, վորը գալիս եր նրա մոտ՝ այդ հանճարեղ սելեկցիոներից, հրաշալի ծերուուց նրա փորձը, գիտելիքները սովորելու անկեղծ մատղրությամբ։

Իվան Վլատիմիրովիչն այս անգամ ևս շատ սիրալիք ու
անկեղծ եր դեպի մեղ՝ Դիմելով մեղ, նա ասաց՝

— Պուք յերջանիկ եք, ընկերներ, վոր ապրում եք այսպիսի
հրաշալի գարաջըջանում։ Յես ահա 78 տարի յեմ ազրեւ բայց
միայն այժմ և ծավալվում իմ խսկական կյանքը՝ բեղմնափոր,
ստեղծագործական աշխատանքը՝ հոգուտ անձագրածիր խորհրդա-
ցին յերկրի բազմամիւնո՞ւն աշխատավորության։

— Յես այլիս յերկար չեմ ապրելու, — շարունակեց ծերունին,
— բայց ձեր՝ խորհրդային յերիտասարդության առաջ հրաշալի
գործի անսահման ասպարեզ ե բացմում:

Յեզ Խվան Վլադիմիրովիչն սկսեց վոգեվորությամբ պատմել մեղ իր աշխատանքի սկզբնական շրջանի մասին, թե ինչպես յերկար ու ձիգ տարիներ գոյություն ունեցող ասորտիմենտի



ԻՎԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ ՄԻԶՈՒՐԻՆԸ ՀԱՅ Ե ՍԻՐՈՒՄ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ

մեջ պաղատուների լավագույն սորտերն եւ փնտռել հյուսիսում։ Ծերունին վոչ առանց հուզմունքի ցույց եր տալիս մեղ պլուզատուների առևտական հին սորտերը՝ ունր, անհրապույր պտուղներով։ Հին այգեգործության այդ խղճուկը, «ապորինի» մնացորդները։ Յեկ հենց այդտեղ եւ համարյա մանկական հրճվանքով, ցույց եր տալիս «Կանդիլ կիտայկայի», «Շաֆրան կիտայկայի» հիբրդի խնձորենիները, «Բերե Զիմնյայա» տանձենին, վորոնք զուգված ելին փարթամ, սպիտակ ծաղիկներով, հիբրիդներ, վորոնք ցարական իշխանության ժամանակ չեյին կարող ընդունելություն գտնել և վորոնց, ինչպես հազորդեց Միջուրինը, ռապուրինի ծնվածներ։ Եյին անվանում։

Իվան Վլադիմիրովիչն իր տնկարանի բաղմաթիվ ոբյեկտ-

ների միջոցով մեղ ծանոթացնում եր այնպիսի բույսերի, վորանք մենք վոչ մի այլ տեղ յերբեք չեյինք կարօղ տեսնել։ Դրանք եյին չինական ու ճապոնական բալերը, դրանք իրար հետ և ռուսական բալերի հետ տրամախաչելուց ստացված հիբրիդները, մոնղոլական սալտրները, տրամախաչումով նրանցից ստացված նոր բույսերը։ Իվան Վլադիմիրովիչը վարժվել եր բուսական աշխարհի ամենաբաղմապիսի այն ձևափոխություններին, վորանք ստացվում եյին տարբեք ձեռքի արամախաչումից։ Յերկար տարիներ շարունակ նրա աչքի առջև ծնվել ու ձևավորվել եյին նոր բույսեր, ուստի նա մեծագույն հրճվանքով ցույց եր տալիս իր յուրաքանչյուր զավակո՞ւ հիբրիդը։

«Սովորեցնք գիտել աշխարհը՝ նրա անընդհատ շարժման, զարգացման, ձևակերպման պրոցեսում, ինչպես սովորեցրել են մեզ Մարքսը, Ենգելը, Լենինը, — ասում եր գիմելով մեզ Իվան Վլադիմիրովիչը, — մի պատկերացրեք քարացած, անշարժ ձեեր— Վլադիմիրովիչը, — մի պատկերացրեք քայլություն չունեն։ Յեկ այդ ձեերի բնության մեջ այդպիսիք գոյություն չունեն։ Յեկ այդ ձեերի փոփոխման լավագույն վարպետը՝ ինքը բնությունն ե, մարզը նրանից պետք ե սովորի»։

Յեկ բնությունից յուրացված այդ մեթոդով՝ հիմնական, հիբրիդացման մեթոդով Միջուրինը սաեղծել ե սորտերի այդ բազմապիսությունը, ավելի քան 350 սորտ։

Այդ որն անվերջ ապշեցնում եր մեզ Միջուրինը՝ մեկը մյուսի հետեւից ցույց տալով այնպիսի «հարավայիններ», ինչպիսիք են՝ «խցանի ծառը», «քաղցր շագանակը», գեղձի ու նուշի հիբրիդը, յելակի և սորի հիբրիդը։ Յեկ վորքան փարթամ եյին անում այդ բոլոր բույսերը հյուսիսում։

Փոքրիկ շնիկը, վորն ըստ յերևույթին վարժվել եր այդպիսի զբոսանքների, աշխատմորեն ուղեկցում եր ծերունուն՝ անկարանում, վոչ մի քայլ հետ չմնալով նրանից։

Այդ պահին իվան Վլադիմիրովիչը մոտ վագեց բանվորի մեփոքրիկ աղջիկ և մի ծաղկեփունչ մեկնեց նրան։ Ծերունին, բարեսրտորեն ժպտալով՝ վերցրեց ծաղկիները, զրպանից հանեց մի խնձոր և ալիք աղջկան՝ համբուրելով նրա ձեռքը։ Միջուրինի կողմից մեզ ուղեկցող աշխատակիցը պատմեց, թե վորքան խորն ե սիրում Միջուրինը յերեխաններին։

— ԶԵ՞ք հոգնել, իվան Վլադիմիրովիչ, — զիմեց Միջուրինին նրա մոտոզնական Պակել Նիկանորովիչ Յակովիկը, անհանգըստանալով ծերունու յերկարաժիկ, աշխատմ զրուցների համար։

— Յերիտասարդության հետ մարդ յերբեք չի հոգնի, — հանաքի ավելց Միջուրինը և դիմելով նրան, խնդրեց՝

— Պաշա, ցույց տուր ընկերներին մեր ծաղիկները:

Ընկեր Յակովիկը, տնկարանի մի այլ անկյունում մեղ ցույց տվեց «մանկական» շուշանի «հարավի թփերը, վորոնք ունեցին շուշանի բաց-դեղնավուն, խոշոր ծաղիկներ՝ մանուշակի հատով: Նա ցույց տվեց մեղ «պարտեզի հասմիկը», վորեց յելակի հոտ եր բուրում և Միջուրինի ստեղծած ուրիշ շատ հրաշալի ծաղիկներ:

— 1913 թվականին, հոլանդացիները մի թուփ մանուշակակերպ շուշանի համար տալիս եյին քսան հաղար դոլար, պայմանով վոր վոչ մի այլ յերկում ինչպես և մեռսաստանում չըվաճառվի այդ ծաղիկը, սակայն Միջուրինը չհամաձայնեց, — հազորեց մեղ ընկեր Յակովիկը:

Յերկար ժամանակ ծանոթանալով Միջուրինի տնկարանի հմայիչ բույսերին՝ մենք այս անդամ ևս վերադարձանք նոր գիտելիքների ու տպավորությունների մի հսկայական պաշարով: Այս անդամ ևս մենք հեռանում եյինք՝ մեր տեսածների ուժեղ տպավորության տակ: Մեզանից ամեն մեկը դեռ այն ժամանակ սեփական պլաններ եր կառուցում բնությունը վերափոխելու, նոր, հրաշալի բույսեր ստեղծելու համար: Մեր ականջին շարունակ հնչում եյին հմայիչ ծերունու խոսքերը՝

«Մեր եպիտայամ նետաբերից ե ապրել յեվ աշխատել»:

*
**

1934 թվականի սեպտեմբերի 20-ին պրոլետարական յերկիրը տոնեց մեծ սելեկցիոններ-պտղաբույժի աշխատանքի 60-ամյա հորելյանը:

Միության ծայրամասերից Միջուրինսկ եյին հավաքվել ավելի քան 2000 պատվիրակ՝ Հեռավոր Սիբիրից, Միջին Ասիայի և անդամական պատվիրակություններից, Ռուսական Հյուսիս, Կովկասից, Անդրկովկասից:

Արդեն 80-ամյա ծերունին հազիվ եր կարողանում արտահայտել այն անսահման ուրախությունն ու յերախտամիտությունը, վորն զգում եր նա կուսակցության, խորհրդային կառավարության հանգեց:

Լուսարձակներն ամեն կողմից շողջողում եյին դահլիճում: Հանգսավոր նիստի նախագահության շարքում նոտած ծերունու զունատ գեմքը շատ վրդովված եր ու անհանդիստ, յերբ նա հազիվ լսելի ձայնով ասաց:

— Իմ 60-ամյա աշխատանքից 43 տարին յես անց եմ կացրել ցարիզմի գաժան միջավայրում, արհամարհանքի և ծաղրանքի մթնողրատում: Միակ ցանկությունը, վոր ունեմ յես, այն ե, վոր իմ սոր բույսերը՝ հիբրիդները տարածվեն կոլտնտեսություններում, նոր բույսերում՝ մասերում: Ել ավելի լավագույն սորտեր ստանալու թյան տարբեր մասերում: Ել ավելի լավագույն սորտեր ստանալու համար: Յես ստացա խորհրդային կառավարությունից այն ամենամարդ լսելի Յաղիվ լսելի ձայնով վերնորդ ընկեր Ստալինի, — դողդողուն, հազիվ լսելի ձայնով վերնորդ ընկեր իր յելույթն իվան Վաղիմիրի մասին գիտելիքի բարձրեց:

Ալդ հօբելյանը միաժամանակ նաև ամրող խորհրդային գիտության անժխտելի հաղթանակի հոբելյանն եր, վորին արձագանաքցին Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Ավստրիան և այլ յերկուները:

Ամերիկայի Հարավային Դակոտայից հոբելյանին մասնակցում եր հոչակավոր պատղարույժ՝ գոկտոր Հանսենը, վորը վաղջունելով Միջուրինին ասաց:

— Յես ճանաչում եմ Միջուրինին բավականին յերկար տարիների ընթացքում: յես արդեն յոթերորդ անգամն եմ զալիս Միություն և յուրաքանչյուր անգամ, յերբ հեռանում եմ այդտեղից, կրկին ու կրկին եմ ուզում վիրազանալ այս յերկիրը:

— Չափազանց մեծ են Միջուրինին վաճառմները, — շարունակում ե գոկտոր Հանսենը, — և նրանց մասին Ամերիկան շատ վաղուց գիտեն: Մենք վստահ ենք, վոր ամերիկյան և խորհրդային մասնագետների միացյալ աշխատանքներն ել ավելի արդյունավելիքնեն, և այդ միանական սելեկցիոն աշխատանքով պետք է ստեղծել այն «միջազգային խնձորը», վորն իր մեջ պարունակելու յե ամերիկյան սորտերի պահունակությունը, միջուրինյան սորտերի ցրտադիմացկունությունը և ֆրանսիական սորտերի համը. հույսով եմ, վոր այդ մեզ կհաջողվի, — վերջացնում ե վաղջույնի խոսքը ամերիկացի Հանսենը:

Այս, Միջուրինին ճանաչում են համաշխարհային գիտության առաջամիջոր գործիչները: Ավստրիայի Այզեղործական Փողաձականի հայտնի մասնագետ պրոֆեսոր Ցվեյգելտն իր նամակում, վորն ուղարկված ե «Սոցիալիստական Գյուղատնտեսություն» թերթի խմբագրությանը, հոբելյանի աթիվ ասում է

«Այս, ինչ վոր ստեղծել և Միջուրինն իր համառ, հանձարեղ սելեկցիոն աշխատանքով 60 տարվա յերկարագու ժամանակաշրջանում, այս, ինչ վոր հաջողվեց նրան ընդհանուր ոգտի համար լույս աշխարհ հանել ժառանգականության խորը գաղտնիքներից, վոչ միայն դարձավ այժմեյականության սեփականությունը, այլև ժողովրդական անտեսական և դիտական մեծ նշանակություն և ունենալու ապագայում։

Մի այլ բնագավառ, վորտեղ Միջուրինի աշխատանքը խոր հետք և թողել, դա զիտա-սելեկցիոն բնագավառն է։ Այստեղ հանձարեղ պրակտիկը նըրորեն, յես կասեցի՝ բնազդաբար դուժագրելով զիտելիքներն իր բույսերի վրա, հասցըել և նրանց ըլսված պտղաբերության։

Բայց հենց այդպես պետք և լինի սելեկցիոն աշխատանքը ուղին, վորպեսզի նա չվերածվի տեսական, մաթեմատիկական խորթ խաղի։

Մատնացույց անելով պատվաստակալի մեծ ազդեցությունը պատվաստացվի վրա և ընդհակառակը, մենառների իր սիստեմով, Միջուրինը հերքեց բույր հին դոդմաները և մատնանշեց այն պլաստիկությունը, վորն առանձնապես տեղի ունի բույսի մատղաշ որդանիզմում։

Միջուրինին հաջողվեց նոր ուղի հարթել ժառանգականության գիտության համար, վորն այսուհետև պարտավոր և հաշվի առնել նրա ամբողջ աշխատանքը։ Հարկավոր և նրա կուտակած փաստական նյութն ուսումնասիրել, համաճայնեցնել մինչև այժմ գոյություն ունեցող կարծիքների հետ և յեթե անհրաժեշտ ե, պետք և նրանով ուղղել գոյություն ունեցող տեսությունը։

Այդպես, հանձարեղ պրակտիկը դարձավ գիտության մի առաջնորդ, մի գիտության, վորը խոնարհում և նրա առաջ շնորհակալությամբ ու հարգանքով։


ԽՍՀՄ-ն կարող և պարծենալ, վոր Միջուրինն իր ծեր հասակում զեռ շարունակում և աշխատել նրա անունն ընդմիշտ կնազերժանա ժողովրդական տնտեսության ու գիտության վոսկե մատյանում։ — Միջուրինի մասին այդպես արտահայտվեցին առաջավոր մասնագետները Գերմանիայից, Անգլիայից, Չեխով Ըլսվակիայից, իսկ խորհրդային յերկրում այդ հոբելյանը վերածվեց իրոք համամիութենական տոնին հանուն սոցիոլիստական պտղաբուժության զարգացման։

Հոբելյանի առթիվ նվաճ վաղիմիլովիչ Միջուրինն ընկ։ ԱՏԱԼԻՆԻՑ ստացավ հետեւյալ հետազիրը։

«Երտաց վողունում եմ ձեզ, իվան Վլադիմիրովիչ, այն բեղմանովու աշխատանքի վարսունամյակի առքի, վոր կատարել եք Դուք նոզուս մեր մեծ հայրենիքի։

Առողջություն լիկ նորանոր հաջողությաններ եմ ցանկանում Զեզ՝ այգեգործության վերակառուցման զործում։ Ամուս սեղմում եմ Զեր ձեռքը։

Ի. ԱՏԱԼԻՆ



Պաղից անջատված սերմերը չորացնում են հով տեղում և յուրաքանչյուր կոմբինացիայից սառցված սերմերը պահում առանձին ծրարի մեջ, վորի վրա գրում են մայր սորտի և փոշումիչի անունը:

Բայց բոլոր բույսերից չեն ստացվում հաջող հիբրիդներ, այսինքն՝ այնպիսի բույսեր, վորոնք համապատասխանեն փորձաբարի հետապնդած նպատակին:

Լավորակ հիբրիդներ ստանալու համար Միջուրինը շատ մեծ նշանակություն եր տակաս հիմնական բույսերի՝ ծնողների ընտրությանը: Նա հաստատում է, վոր վոչ միայն մինույն զույգ բույսերից տարբեր ժամանակամիջոցում տարբեր բույսեր են ստացվում, այլ և տրամախաչման միջոցով ստացված մի պտղի մեջ յեղած տարբեր սերմերից զարգանում են բոլորովին տարբեր հատկանիշներ ունեցող բույսեր, որինակ՝ յեթե մի խընձորից ստացված բոլոր սերմերը ցանվեն միենույն պայմաններում, կստացվեն բույսեր, վորոնք կտան շատ տարբեր համար, գույնի, մեծության և դիմացկունության պտուղներ. տարբեր ուժի զարգացման կլինեն և ծառերը:

1. Մի քանի տասնյակ տարի առաջ միջին Ռուսաստանում դեռ չկային լավորակ ձմռան տանձի սորտեր. Կողովում շատ տարածված եյին տեղական ամառն տանձերի սորտերը, վորոնց պտուղները բավական անհամ եյին և պահելու համար վոչ դիմացկուն, չնայած նրան, վոր ծառերը բավական դիմանում եյին ձմռան ցրտերին: Հարավային Ռուսաստանում կային շատ բարձրորակ տանձենիներ՝ և խոշոր, և հյութալից, հալվող միա ունեցող պտուղներով, վորոնք պահպանվում եյին մինչև ձմռան վերջը:



Միջուրինի Բերե ձմռացին

Այդ սորտերը բնակված են Ֆրանսիայից, Իտալիայից, սակայն չեն դիմանում հյուսիսի խլատ ցրտերին. Նրանց գալար ծառերըն առաջին իսկ ձմրանը ցրտահարվում եյին Կողլովի պայմաններում:


— Պետք ե ստեղծել տանձենու այնպիսի սորտ, վորն իր բարձրորակ պառզեների հետ միասին կատարելապես դիմանա հյուսիսի ցրտերին,—աճա այդ նպատակն եր իր առաջ դրել ի. Վ. Միջուրինը, յերբ նա տեղական տանձենու ցրտադիմացկուն, բայց անհամ պառզեներ ունեցող սորտը՝ «Լիմոնկան» փոշոտում եր ֆրանսիական բարձրորակ, բայց վոչ ցրտադիմացկուն սորտերի հետ. Սակայն տարիներ եյին անցնում և հիբրիդ բույսերը տալիս եյին ամառը հասնող նույնպիսի վատորակ պառզեներ, վորոնք վոչնչով չեյին տարրերվում տեղական «Լիմոնկաներից»:

Ուրեմն, չնայած այն բանին, վոր հիբրիդի կազմակերպմանը մասնակցել ե վորպես փոշոտիչ նաև ֆրանսիական սորտը, բայց նրա հատկանիշները Կողլովի պայմաններում չեյին արտահայտվում. սրանց ձնչում եյին տեղական սորտերի հատկանիշները . . .

Հետագայում, արդեն մեծ փորձառություն ձեռք բերելուց հետո, Միջուրինն այդ փաստը բացատրում ե նրանով, թե այն նոր հիբրիդում, վորն ստացել է յերկու տարրեր բույսերից, կողմովի պայմաններում զարգանում և արտահայտվում են վոչ թե ֆրանսիական, այլ տեղական տանձենու հատկանիշները, նրանք, վորոնց զարգացմանը նպաստում են շրջապատող պայմանները: «Երջապատող պայմաններ» ասելով իվան Վլադիմիրովիչը հասկանում ե ուղի, ջրի, հողի, ջերմության աղղեցությունը, բացի այդ, նա հաշվի յե առնում քամիների ուժը, ուղղությունը, ողի ելեկտրականությամբ հազեցվածությունը, լույսի ուժը, հողի կազմությունը, խոնավությունը և այլ պայմաններ:

Արտգրող՝ ծնող՝ բայսերի հաջող բներուրյաներ կապահովվի միայն այն գեպին, յերե նրանցից յուրաքանչյուրը վերցված լինի տարբեր աջարնագրական պայմաններից, — ասում ե Միջուրինը:

Յեվ իրոք, յերբ ձմռան տանձենի ստանալու նպատակով, արամախաչելու համար նա ընտրում է վորպես արտադրող՝ բույսերից մեկը՝ ուսսուրիական տանձենին (վորն ունի շատ մանր, անհամ պառզեներ, բայց շատ ցրտադիմացկուն ե) և փոշոտում այն ֆրանսական տանձենու «Բերե-Ռոյալ» սորտի փոշիով, հաջողվում ե վերջապես ստանալ մի նոր հիբրիդ տանձենի, վորն



«ՄԻԶՈՒՐԻՆՑԱՆ ԲԵՐԵ ԶՄԵՌԱՅԻՆ»

արդեն և՝ ցրտագիմացկուն և իր մոր նման, և՝ խոջոր, համեղ պը-
տուղներ ունի, հատկություններ, վորոնք անցել են նրա հորից՝
ֆրանսիական սորտից, — այս սորտը նա անվանում է «Միջուրինի
բերե Զմեռային»:

Ուրեմն, հետավոր վայրերում աճող բույսերից ստացված հիբրիդներն ավելի լավ են աճում նոր միջավայրում, ինչպես ասում է Միշուրինը. «Տրամախօսութից ստացած սորբ կոնկուս ծնողների այնպիսի հաւաքոնիւթեր, վորոնց առտանյօտներ լիվ զարգուցմանը նպաստու են ինիբրիդի անհօղուրյան ընթացքում նրան ուղապառող պայմանները»:

2. Հիբրիդի ծնողներն ընտարելիս, Միջուրինը մեծ նախակություն և տալիս բույսի հասակին։ Յեթե տրամախաչումը կատարվում և շատ յերիտասարդ, թույլ զարգացած կամ շատ ուժահասակ, ուժասպառ ծառերի վրա, այդ գեղգում տվյալ սորտի հատկանիշները հիբրիդում թույլ են արտահայտվում, մինչդեռ ուժեղ զարգացած կուլտուրական ծառերի, նմանալիք յել փայրի բույսերի նաև կանոնավոր հինգական արտաքինությունը միաժամանակ առաջանակագույն է արտահայտվում հիբրիդում։


Յերբ Միշտ բինը «Սիրիլական» վայրի խնձորենին փոշու սուռ և Դրիմի «Կանդիլ-Սինապ» խնձորենու փոշիով, չիրը իդը մանր պտուղներ, վորն ուժեղ կերպով արտահայտում է «Սիրիլական» վայրի խնձորենու հատկանիշները, իսկ յերբ նաև «Զինական» խնձորենու յերթասարդ ծառն և ընտրում նույն «Կանդիլ-Սինապ»-ի հետ փոշուելու համար, ստացած հիքքիդը տալիս և բավական խոշոր պտուղներ, բայց համեմատաբար ավելի թույլ զիմացկումն, քան առաջին գեպօւմ, այսինքն՝ այս զեպքում արդեն գերակշռող են հանդիսանում «Կանդիլ-Սինապ»-ի հատկանիշները:

3. Ենիսելով իր հիմական սկզբունքից, թէ հիրքիդ սերոր կազմակերպմանը նպաստում ե տվյալ բույսն ամբողջությամբ, ի. գ. Միջուրին իր մի շարք աշխատությունների հիման վրա հաստատում ե, վոր հիբրդում կալուրական հատկանիւներն ավելի յեն գերակուում այն դեսկօւմ, յերե հիբրդիդիցիան կատարվում ե սեփական առևտուն ունեցող ծառերի վրա, իսկ այն դեպքում, յերբ փորձնական ծառերն իրենք պատվաստված ենին վայրակի վրա, նրանցից բարձրորակ հիբրիդ բույսեր ավելի քիչ են ստացվում: Միջուրին ընդունում ե, վոր զգալի յե արմատային սիստեմի ազդեցությունը և հիրքիդի կազմակերպման պրոցեսում:

Այդ նպատակով ել Միջուրինը կարևոր ե համարում հիբրիդներն աճեցնել սեփական արմատաներով, առանց վայրակի վրա պատվաստելու:

Բայց մեր պատառու բույսերի մեծ մասը վագատալու և սերով, որինակ՝ չվերով չի արմատակալում. մի շաբք տարիներով աշխատանքով Միջուրինին հաջողվեց մշակել մի մեթոդ, վորով հնարավոր և դառնում բույսի արմատակալում անմիջապես հաջանեամ. այդ կատարվում է հետեւյալ ձեռք:

Ճյուղի այս մասում, վորանզից ողակած տապահ հազցնում են սետինե մի խողովակ, մոտավորապես 6—8 սմ յերկարությամբ, պարզ և, վոր սետինե խողովակն աճող ճյուղի վերից հազցնել անկարելի յեղան խանգարում են տերեները



ԱՐՑԵՍԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱԼՈՒՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ա—Արմատակալման համար պատրաստաված բույսը
ե—կեղևի ողակաձև կտրվածքը
բ—Ռետինե խողովակը կտրված մեկ կողմէց

և ձյուղերը, այդ պատճառով խողովակն յերկու պատերից ել մի կողմից կտրում են Բավական ե, յեթե ռետինե խողովակի պատերի հաստությունը լինի 2 մմ, իսկ միջի տրամագիծը՝ 10 մմ. Խողովակի միջին մասում, յերկու պատերի վրա անցք են պատրաստում. անցքերի արամագիծը պետք ե համապատասխանի շվի տրամագիծն, այն մասում, վորտեղից ողակաձև հանված ե կեղեվը. Պատրաստված ռետինե խողովակը հագցնում են ձյուղին այն մասում, վորտեղ հանված ե կեղեվը. Ռետինե խողովակի այն ծայրը, վորը կտրված չե, ծածկում են ռետինե ամուռ խցանով, իսկ մյուս ծայրին հագցնում են ապակյա, ուղիղ անկյունով խողովակ՝ մինչ 12 մմ տրամագիծով. միացման տեղում ռետինե խողովակն ամեն կողմից ծածկում են այդու մածիկով (садовыи вар) և խաչաձև ամուռ կապում շվի շուրջը. ապակի խողովակի մյուս ծայրը պետք ե ուղահայց դիրք ունենալ.



ԱՐՄԱՏԱԿԱԼՈՒՄ ԱՑՈՂ ԲՈՒՅՍԻ ՀՅՈՒՂԻ ՎՐԱ

Այդ բույսը պատրաստելուց հետո, ապակի խողովակի ուղղահայց ծայրից լցնում են յեռացրած, բայց սառցրած ջուր կխողովակի բերանը փակում բամբակով. Զուրն արագ դուրսիանում ե, ուստի պետք ե աստիճանաբար ավելացնել:

Հինգ կամ յոթ չարաթվական ընթացքում, ճյուղի այն մասից, վորը գտնվում ե խողովակի մեջ, առաջանում ե մանր արմատավորի մի նոր փոքրնջ, շնորհիվ այն բանի, վոր կեղևի այդ փոքր ներտը հեռացված ե, ոնդանյութերի հոսանքը միայն վերև է ընշերտը հեռացված ե, ոնդանյութերի հոսանքը միայն վերև է ընշերտը հեռացված ե, իսկ շվի վերեկից իջնող մնադանյութերը հասնելով կեղևի թանում, իսկ շվի վերեկից իջնող մնադանյութերը հասնելով կեղևի

կորփածքին, կուտակվում են այստեղ: Արժամաները տալուց հետո շիվը կարում են մայր-բույսից և տնկում հողում, վորը հետագայում զարգանում ե սեփական արժամաների վրա:

Պարզ է, ինարին, վոր տվյալ տեխնիկան լայն արտադրական բնույթ ստանալ չի կարող, մինչդեռ փորձնական աշխատանքի համար միանգամայն հնարավոր ե կիրառել:

4. Բացի ծառերի ընտրությունից, Միջուրինն անհրաժեշտ է համարում փոշոտման ժամանակ կատարել նաև տռանձին ծաղիկների ընտրություն:

Այն գեպքում, յերբ փոշոտման համար ընտրվում են ծաղիկները սաղարթի միջին, ստվերոս մասում, ստացվում են ցածր հատկանիշներ ունեցող հիբրիդներ. պաղի հասունացման ընթացքը և սնման պայմաններն ազդում են նաև նրա սերմերի կազմակերպման վրա, վորոնցից հետագայում առաջանում են հիբրիդ բույսեր:


Այդպիսով, յավ հատկանիշներ ունեցող հիբրիդ ստանալու համար կարելու ե, վոր փուուելու ժամանակ բնուրվեն այն նյուղերն ու ծաղիկները, վորոնեցն գտնվում են լույսի յեվ սենդի նպաստավոր պայմաններում:

5. Յեթե առարեր սորտերի միջն տրամախաչումը կատարվում է ընդունված պարզ ձեռքով և հեշտությամբ և տեղի ունենում բեղմնավորումը, ապա շատ հաճախ նույն ձեռքով աշխատելիս չի հաջողվում, որինակ, բալի ու կեսասի, տանձի ու սնձնու, ծիրանի ու սալորի հիբրիդ պառուղ ստանալ, այսինքն՝ տրամախաչում կատարել տարբեր տեսակի, հեռավոր բույսերի միջն:

Յերկար ժամանակ անհնարին եր համարվում տրամախաչում այդպիսի տարբեր պատառու տեսակների մեջ: Միջուրինը մեծ համառությամբ հնարավոր միջոցներ եր փնտռում այդ հեռավոր բույսերը տրամախաչելու համար և նրան իրոք հաջողվեց ստանալ հիբրիդ բույսեր՝ տարբեր տեսակների տրամախաչումից:

Յերկար տարիների ընթացքում այդ անպարիվում կատարած դիտողությունների հիման վրա նա հաստառում է, վոր հետագոր բույսերի մեջ փոխարձակ բեղմնավորութիւն հաջողվում է այն դեպքում, յերբ ծնողների զերում վերցված ծոռերն իրենք տնել են հիբրիդ սերմից (բեկուզ յեվ նույն տեսակի, բայց տարբեր սուրենի ստանալում): Նա միաժամանակ հաստառում է, վոր հեռավոր բույսի փոշով բեղմնավորութիւն ավելի հնարավոր ե դաշնում այն

ժամանակ, յերբ օրամտխաչումը կատարվում է մայր բույսի առաջնական օրջունում: Միջուրինն այդ բացատրում է նրանով, վոր հիբրիդ բույսն առաջին ծաղկման ընթացքում ավելի հեշտությամբ և բեղմնավորվում այլ տեսակի բույսի փոշովով քան վեգետատիվ ձևով բազմացված, համեմատաբար ավելի հասակավոր մի այլ բույս:



Հիմնական ինստիտուտ
Ա. Յ. Վ. Ե. Թ. Ո. Գ. Ն. Ե. Բ.

1. Հեռավոր բույսերը միմյանց հետ արամախաչելիս Միջուրինը գործադրում ե մի շարք ոժանդակ ձեռք ևս: Այդպիսի դեպքերում փոշուաելու համար նա հաճախ ոդտագործում ե փոշուիչ բույսի վոչ թե մեկ, այլ միքանի սորտերի փոշիների խառնուրդ, որինակ՝ կեռասենին բալենու փոշիով սովորական պայմաններում դժվար ե բեղմնավորվում, մինչդեռ յերբ նույն կեռասենու ծաղիկները Միջուրինը փոշուառում ե բալենու վոչ թե մեկ, այլ միքանի սորտերի փոշիների խառնուրդով, այդ դեպքում տեղի յեռնենում բեղմնավորում և այդ յերկու տարբեր տեսակներից ստացվում ե հիբրիդ պտուզ:

Շատ հաճախ այդ տարբեր տեսակի բույսերի մեջ փոշուումը կատարվում ե. որինակ, կեռասենու ծաղիկը կարող ե փոշուավել բալենու փոշիով, սակայն այդ փոշին կեռասենու ծաղիկի վարսանդի վրա կարող ե չծլել և բեղմնավորում տեղի չունենա, այդ դեպքում, փորպես ոժանդակ միջոց, Միջուրինն արհեստական կերպով բալենու ծաղիկի վարսանդից արտադրված հեղուկը տեղափոխում ե կեռասենու ծաղիկի վարսանդի սպիրի վրա. այսպիսով կեռասենու ծաղիկի վրա արհեստականորեն ստեղծվում ե մի նոր միջավայր, փորտեղ բալենու փոշին, փորպես սովորական միջավայրում կարող ե ծլել, իսկ յեթե այլ պատճառներ չխանդարեն բեղմնավորմանը՝ այդ տարբեր տեսակներից առաջանում ե հիբրիդ պտուզ:

2. Ներկայումս Միջուրինի աշխատանքներում ե նրա անվան գենետիկական կայանում հիմնական տեղ են գրավում մի շարք նոր աշխատանքներ, վորոնց նպատակն ե լուծել հյուսիսում դիմացկուն դեղձենի ստանալու խնդիրը: Այդ ուղղությամբ Միջուրինը շատ յերկար տարիներ ե աշխատել: Այդ չերմասեր բույսի սերմերը հյուսիսում շատ շուտով են ցըտահարվում: Համար առաջին իսկ ձմռանը՝ բայց այդ պատվերը դրված եր Միջուրինի առաջ վորպես պտղատու կուլտուրաների հյուսիսացման հիմնական խնդիրներից մեկը. և ներկայումս, յերբ այդ ուղղությամբ աշխատանքի մեծ փորձ կա կատարված, հույս կա, վորդեղձենին կամի նաև Միջուրինսկում:

Միջին Ռուսաստանի գաշտավայրերում նշենիներից՝ վայրի դրությամբ՝ աճում ե մի ցածրահասակ թուփ, փորը կոչվում ե «բուրովնիկ» (ամիգգալուս նանա): Այդ թուփը դիմանում ե շատ ցածր ջերմության, բայց ունի վատորակ, մանր, դաշը պտուղներ, սակայն նա նշենիների հյուսիսում աճող միակ ներկայացուցիչն է:

Կարելի՞ յե արդյոք սովորական հիբրիդացման մեթոդով, այսինքն՝ այդ նշենին հարավի դեղձենու սորտերով փոշուելիս ստանալ այնպիսի հիբրիդ դեղձենի, փորը դիմանա հյուսիսի խիստ կլիմային:

Անցան մի շարք տարիներ:

Այդ ուղղությամբ փորձերը համբերությամբ կրկնվում ելին յուրաքանչյուր տարի: Ցուրաքանչյուր տարի այդ նշենու ծաղիկները փոշուառում ելին դեղձենու փոշիով, փոշուառում եր կատարվում նաև հակառակ ձեռվ, սակայն այդ հեռավոր տեսակների մեջ բեղմնավորում տեղի չեր ունենում, հիբրիդ պտուղներ ձենի ստանալ չեր հաջողվում: Պետք եր գտնել ցըտադիմացկուն դեղձատանալ նոր միջոցներ և այդ միջոցները գտնվեցին:


Մոնղոլիայից բերված վայրի նշենին՝ «բորբավիկը» Միջուրինը տրամախաչում ե Ամերիկայից բերված մի այլ վայրի նշենու հետ, վոր կոչվում ե «Դավիթի» նշենի: Այդ յերկու բույսերից ստացվում են հիբրիդ սերմեր, իսկ նրանց ցանքից՝ միանգամայն կենսունակ բույսեր: Այդ ծառերը շատ նման են դեղձենուն, ունեն մինչև յերկու մետր բարձրություն, ծաղկում են շատ առատ ու փարթած ե, վոր գլխավորն ե, վերին աստիճանի ցըտադիմացկուն են՝ 38° ցըտից չեն ցըտահարվում նույնիսկ նրանց ծաղկաբողբջները: Այդ բույսը տալիս ե թեղիտ չոր



«ՄԻԶՆՈՐԴ» ՆՇԵՆԻՆ

պտուղներ, բայց կորիզը ծածկող շերտն ավելի մսալից ե, քան
սովորական վայրի նշենու կորիզը, վորից նա առաջացել ե:

Այդ բույսը Միջուրինն անվանեց «սիջնորդ» այն պատճառ-
ով, վոր նրա ծաղիկներն արդեն հեշտությամբ են պտուղներ
տալիս դեղձենու ծաղիկների հետ փոշտելիս: Այդ ձեռվ ստաց-
ված հիբրիդ բույսերից շատերն առաջին տարիներին հաճախ
աբտահայտում են վայրի նշենու կամ կուլտուրական դեղձենու
հատկանիշները: Վերջիններս ավելի ցրտադիմացկուն դարձնելու
համար Միջուրինը պատվաստում է նրանց միաժամ հասակում
մամուխի ցրտադիմացկուն թփի վրա: Ահա այդ սւլլությամբ
և կտարում նա ցրտադիմացկուն դեղձենի ստանալու աշխա-
տանքը:



«ՍԱՃԾՈՒ «ԴԻԿԵՐՏՅՈՎԱ»

Բացի այդ, Միջուրինը նույն նպատակով ոգտագործում են ան հյուսիսային կորեյայի կիսավայրի գեղձենիները:

3. Բացի նշված ձեւերից, հեռավոր պտղատու բույսերի միջև հիբրիդ ստանալու համար Միջուրինն ոգտագործում են մի շարք այլ մեթոդներ ևս, զորոնցից մեծ նշանակություն են տալիս «վեգետատիվ մոտեցման» մեթոդին. այդ մեթոդը բայց չափով կիրառում են նաև տանձենիների ցրտադիմացկուն, ձմռան սորտեր ստանալու աշխատանքներում: Տանձենու կուլտուրական սորտերը դեպի հյուսիս շատ հեռու չեն տարածվում. սակայն կա նույն տանձենուն շատ մոտ մի այլ պտղատու բույս՝ սնձնին (քարի), զորն աճում են նաև ծայրը. հյուսիսում:

Տանձենին բնական պայմաններում սնձնու փոշով չի բեղմանավորվում, չնայած մի շարք տարիների ընթացքում կատարված աշխատանքի. տանձենին սնձնու հետ տրամախաչելով, Միջուրինն ուզում եր ստանալ ցրտադիմացկուն տանձենի:

Այդ բույսերի բեղմանավորումը հնարավոր եղանում այն ժամանակ, յերբ Միջուրինը գործադրում եւ «վեգետատիվ մոտեցման» մեթոդը:

Նախ տանձենու յերկու տարբեր սորտերից Միջուրինն ստանում է հիբրիդ սորտը: Միաժամ հիբրիդը նաև պատվաստում են սնձնու պաղաքերաղ ծառին, զորի վրա այդ հիբրիդն աճում է հինգ կամ վեց տարի և առաջին ծաղկման ժամանակ հնարավոր են դառնում արդեն փոշոտել նրան սնձնու փոշիով, ստանալ կենապունակ, նորմալ զարգացած տանձի և սնձնու հիբրիդ: Միջուրինը այդ բացատրում են նրանով, զոր տվյալ գեպքում տանձենու հիբրիդ ճյուղը մի քանի տարի անընդհատ սնվելով հասակավոր սնձնու ծառից, այնքան փոփոխության են յենթարկվում, զոր առաջին ծաղկման ժամանակ արդեն հնարավոր եղանում բեղմանավորել իրեն պատվաստակալ ծառայող սնձնու փոշիով:

Յեկ զարմանալի չե, յերբ Միջուրինի տնկարանում տեսնում ենք միենույն ծառի վրա հասունացող թե տանձենու և թե սնձնու վոսկեղոծ ու կարմիր պատուղները, յերբ տանձենին փարթամ աճում են խնձորենու վրա, սերկելը տանձենու, զորոնց հետագայում պետք են միմյանց հետ փոշոտեն՝ նրանցից տարբեր սորտեր ստանալու համար:

Յեկ Միջուրինը շատ հաճախ այդ ուղղությամբ աշխատելիս նկատում եր, թե զորքան զգալի յեն հիբրիդի վրա այն փոփոխությունները, զորոնք առաջ են գալիս նրա պատվաստակալի

աղդեցությունից, վորոնք պահպանվում են նաև հիբրիդների հետագա սերունդներում:

4. 1893 թվականին «Ֆունտուկեսահնոց Անտոնովկա» խնձորի սերմը ցանելով, Միջուրինն ստացավ շատ փարթամ, միամյա միքույս, վորի տերեները տարորինակ, խիտ թավզով ելին պատաճ: Տերեների խիտ թավզոտությունը խնձորենու միամյա հասակում բավական հազվագեց յերեսոյթ ե:

Նույն տարում, այդ միամյա խնձորենու աչքով նա պատվաստում ե տանձենու ուժեղ տնկին՝ յեռամյա հասակում. հաջորդ տարում այդ աչքն սկսեց աճել, իսկ տանձենու ճյուղերն աստիճանաբար հեռացվեցին:

Տանձենու վրա պատվաստած խնձորենին առաջին պտուղները տվեց 1898 թվականին, բայց մինչև 1906 թիվը և՛ խնձորենին և՛ նրա պտուղները ամեն տարի յենթարկվում ելին խիստաձափոխման, տերեների խիստ թավզոտությունը սկսեց աստիճանաբար նոսրանակ վոր նկատվում եր արդեն միայն տերենի ներսից երեսում:

Շվերի հարթ, կլոր մակերեսն անկյունավոր ձև ընդունեց (ինչպիսին ունենում են տանձենիները). տերեները ավելի խոշոր ելին, բայց արդեն իրենց դիրքով խիստ նմանում ելին տանձենու տերեներին: Սակայն տարորինակը՝ խնձորենու պտուղներն ելին, առաջին իսկ ծաղիկներից կազմակերպվեցին այնպիսի պտուղներ, վորոնք իրենց ձեռվ ավելի շատ նմանում ելին տանձի:

Հետագա տարիներում պտուղներն արդեն ավելի գնդաձեւ ելին. բայց պտղակոթը հարթ եր, նույնիսկ մի վորը գնդաձեւ մակերեսի վրա, պտղի ձագարը չկար, վորով պտուղն իր ձեռվ տանձին եր նմանում:

Տանձենին, վորպես պատվաստակալ, արդպես դդալի կերպով ապեց այդ նոր բույսի վրա նբա կազմակերպման առաջին տարիներին և պտուղների այդ տարորինակ ձեւը պահպանվեց նաև հետագայում: Ներկայումս այդ սորտը Միջուրինի առաջնակարգ սորտերից մեջն ե համարվում. նա ստացել ե «Ռենետ Բերդամոտնի» անունը՝ չնորհիվ բույսի անսովոր կազմվածքի («Ռենետ» են անվանում խնձորենու վորով սորտերը, իսկ «Բերդամոտ»՝ տանձենիների):

Միջուրինն իր այդ սորտը, ըստ իր զարգացման, անվանում ե «վեգետատիվ հիբրիդ»:

5. Այն համոզմունքը, վոր հիբրիդ բույսը զգալի չափով փոփոխվում ե վոչ միայն ժառանգականությամբ, այլև իր միջավայրի պայմաններից, պատվաստակալից, — հիմք ե ծառայում Միջուրինին կիրառելու մի շարք այնպիսի միջոցներ, վորոնցով հնարա-



ԽՆՁՈՐԻ «ՌԵՆԵՏ ԲԵՐԴԱՄՈՏՆԻ» ՍՈՐՏԻ
ՊՏՈՒՂՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՊՏԼԱԲԵՐՈՒՄԻՑ

վոր և լինում հիբրիդ բույսի զարգացմանն անհրաժեշտ ուղղությունը տալ:

Պետք ե նպաստել հիբրիդի զարգացմանն այնպես, վոր նրա պիտանի հատկանիշներն ավելի լրիվ արտահայտվեն. իսկ այդ պահի չափով կախված ե նրանից, թե առաջին տարիներում վոր զգալի չափով կախված ե նրանից, թե առաջին տարիներում վոր սորտը:


Այսի պայմաններում ե զարգանում հիբրիդ նոր սորտը:

Այդ նպատակով Միջուրինը կիրառում ե «Մենտորի» մեթոդը:

«Մենտոր» նշանակում ե «պատվանդան», այսինքն ոժանգակ մի միջոց, վորի սովորությամբ հնարատվոր ե դառնում հիբրիդ բույսի մկանական շրջանում զարգացման վորով ուղղություն տալ:

Վաղուց իվեր պտղաբուծության և այգեգործության մեջ հայտնի յե պատվաստակալի ազդեցությունը նրա վրա զարգացող բույսի վրա: Սովորական փաստ ե, վոր տանձենու միևնույն տարբեկան տեսակի արմատների վրա զարգանալիս, տափս ե բոլորովին տարբեկ հատկանիշներ ունեցող բույսեր, անգամ յեթե պատվաստելու համար աչքերը վերցված են միեւնույն ծառից:

Հայտնի յե, վոր սերկելինու վրա՝ պատվաստված տանձենից մեջ կատարված է պատվաստակալի ազդեցությունը:



«ՌԵՆԵՏ ԲԵՐԳԱՄՈՏՆԻ» ՍՈՐՏԻ ԹՏՈՒՂԸ
ՀԵՏԱԳԱ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Նին 2—3 տարի ավելի վաղ և պատղաբերում, տալիս և ավելի խոշոր պատուղներ, առաջին տարիներին համեմատաբար բարձր բերք, բայց թույլ և աճում, մնում և փորպես ցածրահասակ, գաճաճ բույս և բավական վաղ ել ծերանում ե, մինչդեռ նույնապիսի ոռքտն ուժեղ և զարգանում, ուշ և սկսում, բայց յերկարառ պատղաբերում և փարթամ աճում և յերկար տարիների ընթացքում, յեթե նա պատվաստված և տանձենու վայրակի վրա:

Նման փաստեր հայտնի յեն և այլ պաղատու բույսերի մշտակությունից. խնձորենու համար նման թույլ աճող, գաճաճ պատվաստակալ և ներկայացնում «Ռայկա» կամ «Պարագիսկա» կոչված խնձորենին:

Թե ինչ չափով և պահպանվում պատվաստակալի աղղեցությունը պատվաստված բույսի հետագա բազմացման ժամանակ, այս մասին լրիվ ուսումնասիրություններ չկան:

Միջուրինը հաստատում ե, վոր այդ աղղեցության աստիճանը

ուարբեր և վաղուց իվեր գոյություն ունեցող բույսի և սերմից զարգացող հիբրիդ բույսի վրա: Միջուրինը վճառկանորեն հաստատում ե այն, վոր վաղուց իվեր գոյություն ունեցող պաղատու բույսերն իրենց աճման ընթացքում՝ պատվաստակալի աղղեցությամբ, զգալի չափով փոխում են իրենց կենսարանական, ֆիզիոլոգիական կազմությունը (պատղաբերությունը, պառողների վրակը, զարգացման ուժը):

Կարելի յե արդյոք բացասել նույն փոփոխությունների ավելի ուժեղ աղղեցությունը հիբրիդ բույսի վրա, յերբ տարբեր աշխարհագրական պայմաններում զարգացած ծնողներից ստացված նոր հիբրիդը դեռ լրիվ ձեակերպված չե, անընդհատ փոփոխում ե նույնիսկ մինչև պտղաբերության առաջին տարիները:

Լրիվ համոզված լինելով դրանում, Միջուրինն իր բազմամյա աշխատանքում կիրառում ե «մենտորը», Ամերիկան «Դեղին Բելֆորը» և տեղական «չինական» խնձորենու սորտից Միջուրինին հաջողվեց հիբրիդ ստանալ:

Հիբրիդը տալիս եր բավական վաղ հասնող պտուղներ, վորոնք պահպատմ ելին միայն մինչև սեպտեմբեր ամիսը. սակայն կարեւոր եր ստանալ ձմեռը հասնող սորտ, վորի պտուղները լինեն այնչափ դիմացկուն, վոր պահպեն ամբողջ ձմեռվա ընթացքում:

Այդ նպատակով Միջուրինը հիբրիդ ծառի վրա պատվաստում և սովորական «Բելֆոր» սորտից (վորը ձմեռը հասնող պտուղներ ունի) մի քանի ճառուղ, վորոնք զարգանում են հիբրիդ ծառի սաղարթի վրա: Հետագա տարիներին աստիճանաբար հիբրիդի պտուղների հասունացումը ձգձգվում ե, հասնելուց հետո նրանք բավական դիմացկուն են լինում, պահպատմ են նաև ձմռան ամիսներին:

Այդ դեպքում «մենտոր» հանդիսացափ պատվաստացուն: Մենտորի աղղեցությունը Միջուրինն ոգտագործել ե նաև կեռաստենու «Կրասա սեվիերա» սորտի վրա, վորը բալնու և կեռաստենու հիբրիդ ե: Ակզրում հիբրիդը տվեց սպիտակ պտուղներ, իսկ հետագայում, վեգետատիվ ձեռվ բազմացնելիս, Միջուրինը այն պատվաստում ե կարմիր բալնու վրա, վորի աղղեցությամբ հետագայում բույսերը տալիս են վարդագույն, կարմրավուն պըտուղներ: Բոլոր դեպքերում, «մենտոր» աղղեցությամբ, հիբրիդի պատվաստական գույնը չի փոխվում, ինչպես այդ յերկում ե խընձորենու հետ նրա կատարած աշխատանքից:

իր լավագույն խնձորենու սորտերից մեկը՝ «Կանդիլ-կիտայկան» Միջուրինն ստացել և Դրիմում տարածված «Կանդիլ-Միջուպ» և տեղական «Կիտայկա» խնձորենու տրամախաչումից, սակայն առաջին տարիներին հիբրիդը զեռ ցրտադիմացկուն չեր։ Հիբրիդի ճյուղերը Միջուրինն ստիպված եր պատվաստել տեղական «Կիտայկա»-ի վրա և մի քանի տարուց հետո հիբրիդի պատվաստված շվերն արդեն չեյին ցրտահարվում։

Իվան Վլադիմիրովիչը միշտ զգուշացնում է հիբրիդ բույսերը հասակավոր ծառերի վրա պատվաստելուց, ինչպես այդ կատարում են շատ ազգեգործները՝ հիբրիդի պտղաբերությունն արագացնելու նպատակով։ Այդ նա բացատրում է նրանով, վոր հիբրիդը հասակավոր ծառի, վորպես պատվաստակալի ազդեցությամբ կորցնում ե իր հատկանիշները, և պտղաբերությունն արագանալու փոխարեն, ուշանում ե։

Թե վորքան զգույի յե պատվաստակալի և պատվաստացվի փոխադարձ ազդեցությունը, մանավանդ նոր զարգացող հիբրիդ բույսի վրա, դա ցույց ե տալիս Միջուրինի տնկարանում նկատված մի հետաքրքիր փաստ ևս։ Միջուրինի ոգնական Յակովիկը կիտրոնի միամյա շիվը պատվաստում ե «Բերե Զմեռային» հիբրիդ սորտի միամյա տանձենու վրա։ Այդ բույսերը պատկանում են վոչ միայն տարբեր ցեղերին, այլև տարբեր ընտանիքներին և սովորական պայմաններում միմյանց վրա չեն պատվաստվում։ Սակայն այդ հաջողվում ե կատարել ինչպես հաստատում և Միջուրինն—այն պատճառով, վոր յերկու բույսերն ել յերիտասարդ են, սերմից են ստացված, իսկ տանձենին նույնիսկ հիբրիդ ծագում ունի։

Եստ շուտով ե նկատվում այդ մշտադալար բույսի՝ կիտրոնի ազդեցությունը տանձենու վրա և նույն ձմրանը, տանձենու ճյուղն արդեն տերեները չի թափում, այդ տերեներն աստիճանաբար ստանում են մուդկանաչ գույն և ծածկվում են բարակ մոմաշերտով, մինչդեռ նույնպիսի միամյա տանձենու մնացած չպատվաստված հիբրիդները սովորական ժամանակին արգեն զրկվեցին տերեներից, կիտրոնի շիվը այստեղ ազդելով տանձենու (պատվաստակալի) արմատների վրա, արգելք հանդիսացած տանձենու շվի աճման ընդհատմանը և տերեների թափվելուն այդ գեպքում «մինտորի» գերում հանդես ե գալիս կիտրոնի միամյա տնկին։



ԿԻՏՐՈՆԻ ՅԵՎ ՏԱՇԵՆՈՒ ՇՎԵՐՆ ԱՑՈՒՄԵՆ
ՏԱՇԵՆՈՒ ԱՐՄԱՆԵՐԻ ՎՐԱ:

Այդ փաստը հետաքրքիր ե վոչ թե տնտեսական տեսակետից—ինքը Միջուրինն ևս նպատակ չի դնում աճեցնել կիտրոնի նը տանձենու վրա—այլ այդ նրա բազմաթիվ փաստերից մեկն։

ե, վոր ցույց ե տալիս, թե հիբրիդ ծագում ունեցող բույսերը
վարքան մեծ չափով յենթակա յեն միջավայրի ազդեցությանը:

Միջուրինի աշխատանքում վորոշ դեպքերում մենտորն ունե-
ցել ե նաև բացասական ազդեցություն: Նա ստիպված է յեղել
շատ հիբրիդ բույսեր վոչչացներ վորոնց բացասական հատկա-
նիշներն անհնար և յեղել վերացնել մենտորի միջոցով:

Սակայն Միջուրինը մեծ հմտությամբ ոգտագործել է ինչպես
հիշված մեթոդները, այնպես ել մենտորի մեթոդը:

Մեր կոլտնտեսական փորձարարների այն նոր կադրերը,
վորոնք կազմակերպվում են խրճիթ-լաբորատորիաների շուրջը,
հնարավորություն ունեն լայն չափով ոգտագործելու նշված մե-
թոդները՝ նոր, լավորակ պաղատու սորտեր ստանալու նպատակով



Տրամախաչումը կատարելուց հետո, յեթե տեղի յե ունե-
նում ըեղմնավորումը, զարգանում են հիբրիդ պառաղները, վո-
րոնց արտաքին կառուցվածքի վրա փոշոտիչ սորտի հատկանիշ-
ները կարող են և չարտահայտվել: Հիբրիդ նոր բույսը պետք ե
ատացի այդ պտղի սերմեց:

Հնդավոր տեսակների հասունացած պտուղները (յեթե ամռան
կամ աշնան սորտեր են) քաղելուց հետո, պահում են մի շաբաթ
և, իսկ ձմբան սորտերը՝ մի քանի ամիս, վորից հետ սերմերն
առանձնացնում են ու ցանում հատուկ պատրաստված արկղե-
րում: Ամռան սորտերի սերմերը պահում են մինչև աշուն խո-
նավ ավաղի մեջ, սառը միջավայրում:

Յեթե ցանքը կատարվելու յե արկղերում, վերջինները պետք
ե պատրաստել մոտավորապես 60 ամ յերկարությամբ, 40 ամ
լայնությամբ և 12 ամ բարձրությամբ: Ցուրաքանչյուր նոր սոր-
տի սերմերը 2—3 որ չորացնելուց հետո ցանում են առանձին
արկղիկներում, վորոնք բաժանված են իրաբից աղակերարակ ձու-
ղիկներով: յուրաքանչյուր սորտը նշվում է հատուկ փոքրիկ
տերևներով, վորի վրա գրում են սորտի անունը, ցանքի ժամկե-
տիկներով, որին վրա գրում են սորտի անունը, ցանքի ժամկե-
տիկներով (հասարակ մատիտով). որինակ՝ սերմը հիբրիդ ծագում ունի,
ստացված է «Շալախ» սորտից, «Նախեջեվանի» սորտով փոշոտե-
լիս. մայր սորտի՝ «Շալախի» անունը գրում են սկզբում, նրա

կողքին × նշանը և փոշոտիչի, այսինքն՝ «Նախիջեվանի» սորտի անունը:

Ետիկետը սուրբ ծայրով ամրացնում են արկղի մեջ կատարված յուրաքանչյուր ցանքի սահմանում: Նման նշաններով նշում են ցանած սերմի յուրաքանչյուր տեսակը:

Արկղերում հողի շերտի տակը լցնում են ազյուսի կտորներ, իսկ արկղի հատակը պետք է ունենա մի քանի անցք՝ ավելորդ ջուրն արտաքսելու համար: Արկղերի յերեսը կրծողներից պետք է պաշտպանված լինի մետաղե ցանցով: Յանքը կատարելուց հետո արկղերը տեղափոխում են այդի ու թաղում են հողում այնպես, վոր նրանց մակերեսը գետնին հավասար լինի:

Չմուան ընթացքում արկղերում հողը միշտ խոնավ պետք է լինի: Սկսած առաջին գարնանից, Միջուրինը հատուկ ուշադրություն է դարձնում հիբրիդների դաստիարակմանը:

Ճենց վոր յերեսում են նորածիլ բույսերը, վորոնք ունեն գեա առաջին շաքիլային տերեներ, իվան Վլադիմիրովիչը կատարում ե բույսերի առաջին ընտրությունը: Նորածիլ բույսերից նա ընտրում է այն հիբրիդը, վոր ունի ուժեղ, խոշոր շաքիլներ, կարճ բայց հաստ ցողուն: Յերբ ընտրված նորածիլ բույսերն ունենում են միայն յերեք տերե, նրանք տեղափոխվում են հատուկ պատրաստված հողամասը և յուրաքանչյուր բույսին տրվում է 400 քառակուտի ամ տարածություն:

Նույն տարում միայնա բույսերը կրկին տեղափոխում ե մի ուրիշ հողամաս, բայց նախքան տեղափոխելը, տերեսաթափից առաջ նա կատարում է յերկրորդ ընտրությունը:

Ընտրության ժամանակ նա հաշվի առնելով հիբրիդի ծնողների հատկությունները՝ առավելություն է տալիս հիբրիդի այն հատկություններին, վորոնք պատկանում են ցանկալի ծնողներից մեկին: Յեթե հիբրիդի ծնողներից մեկը յեղել ե վայրի բույս, առաջ ընտրություն կատարելիս Միջուրինն առավելությունը տալիս է ավելի շատ կուլտուրական հատկանիշներ արտահայտող հիբրիդին:

Այդ յերկրորդ հողամասում բույսը պետք է ունենա 200 քառ. ամ տարածություն:

Յերրորդ ընտրությունը նա կատարում է յերրորդ տարվա աշնանը, ըստ նույն հատկանիշների, վորոնցով կատարել եր յերկրորդ ընտրությունը:

Իրենց մշտական տեղում հիբրիդը բույսերը տեսք է ունե-

նան 2—4 քառ. մետր աարածություն, վորտեղ և պտղաբերում են նրանք, Զորբորդ և վերջին ընտրությունը կատարում ե պըտեղերության ժամանակ՝ ըստ պտղաների հատկանիշների: Յեթե հիբրիդ սորտը, ըստ իր բոլոր հատկանիշների, համապատասխան պահանջներին, նա հետաքայում, վորպես արդյունաբերական սորտ, բազմացվում ե վեգետատիվ ձևով: Այն բույսաբերական համար պահանջներին իր մի շարք մեթոդներով մշակում է հաճախ նույնիսկ մի քանի տասնյակ տարի:

Կորիզավոր պտղատու բույսերը Միջուրինը հաճախ մշակում ե միենույն հողամասում, առանց տեղափոխելու: Բայց կիրառում ե ընարության և դաստիրակման այն բոլոր ձևերը, վորոնք գործադրում են հնդավոր տեսակների նկատմամբ:

Ինչ վերաբերում է հատապտուղներին (մորի, մոշ, յելակ, հաղարձենի), նրանց հիբրիդ սերմերը հավաքում են պտղաները հասնելու ժամանակ, անջատում են պտղից, լվանում, չորացնում և ուշ աշնանը ցանում են նույնպիսի արկղերում: Պետք է հետեւ, վոր սերմերը չծիկն նույն աշնանը, հակառակ դեպքում նրանք ձմրան ընթացքում կցըտահարվեն:

Յերբ նորածիլ բույսերն ունենում են միայն յերեք տերե, դրանք տեղափոխում են հատուկ պատրաստած մարգերը և տընկում բույսը բույսից 60 ամ հեռավորությամբ:

Նույն հողամասում կատարվում է ընտրություն՝ ըստ պըտղաների վորակի: Լավորակ պտղաներ ունեցող թփերը տեղափոխում են այդի հետաքա բազմացման համար: Վոչ պիտանի պտղաներ ունեցող բույսերը խոտանում են:

Յելակի սերմերը ցանում են ավելի թեթև հողում, վոր կիսով չափ պետք է խառնված լինի ավազի հետ:

Միջուրինն անհրաժեշտ է համարում, վոր հիբրիդ բույսերը առաջին տարիներին աճեն քամուց պաշտպանված հողամասում: Այն հողամասը, վորտեղ աճում են հիբրիդները, պետք է լավ մշակված լինի (մինչև 30—33 ամ խորությամբ): Ամռան ընթացքում պետք է միշտ վոչնչացնել մոլախոտերը չյուսիսի պայմաններում այն դեպքում, յերբ հիբրիդը ստացված է այնպիսի ծնողներից, վորոնցից մեկն ունի հարավային ծագում, չի կարելի պահանջանային շատ պարարտացնել: Ճիշտ է, լավ պարարտ հողամասում բույսն աճում է ուժեղ, փաթթամ, բայց այդպիսի զարգացումը չի նպաստում ցրտադիմացկուն բույս ստանալուն:

Պատասխանելով Սիրիքի այգեգործներին, վորոնցից շատերը՝ դիմում եյին Միջուրինին գանգատվելով, վոր նրանց չի հաջողակում ցրտադիմացկուն պտղատու սորտեր ստանալ, Միջուրինը պատասխանում ե:

«Բանն այն ե, վոր բոլոր սիրիքիները յեվրոպական սորտերից ստացված հիրքիդներն աճեցնելիս, ցանում են սերմերը Սիրիքի պարարտ սևանողում կամ, ավելի վատ՝ հատկապես պարարտացրած հողամասում. այդպատճառով ալնկիները շատ ուժեղ աճ են տալիս, հասնում են մինչև 2 մետր բարձրության՝ նույնիսկ մի տարվա ընթացքում։ Այդ բուրը, ճիշտ ե, սկզբում ուրախացնում ե այգեգործին, մի քանիսը նույնիսկ կարծում են, թե այդ ե ամբողջ իմաստը։ Միջներա դա կոպիտ սիսալ ե, վորի պատճառով վոչնչանում են այդ ձևով, աճեցրած տնկիները»։

Սիրիքի նույն այգեգործներին Միջուրինը գրում ե, թե իր բազմամյա աշխատանքի առաջին շրջանում ինքն ևս կատարել ե նման սիսալներ և հատուկ պարարտացվուծ հողամասում նրան չի հաջողվել մշակել վոչ մի ցրտադիմացկուն տնկիր։

Հետապայում, յերբ նա իր այդ բույսերն աճեցնում եր վոչ հատուկ պարարտացված հողամասում, հիբրիդներն ավելի ցրտադիմացկուն եյին։ Միջուրինն այդ բացարում է նրանով, վոր բացի լրիվ կերպով չհասունանալուց, փարթամ աճման պայման ներում, զգալի չափով արտահայտվում ու զարգանում են հիբրիդի ջերմասեր, հարավային ծագում ունեցող ծնողի հատկանիշները։

Այդ եր պատճառը, վոր Միջուրինը 10 տարի իր նախկին պարարտ հողամասում աշխատելուց հետո, ստիպված եր բոլոր բույսերը տեղափոխել մի այլ, ավելի վատ հողային պայմաններ ունեցող հոմամաս։

Միանգամայն սիսալ կլիներ, յեթե կարծեյինք—և այդ առ թիվ Միջուրինը հաճախ զգուշացնում ե—թե նման խնամք կարելի յե տանել նաև մեր նորատունկ կամ պտղաբերող արդյունաբերական այգիներում։ Յուրաքանչյուր պատճառու, այդի պետք ե ապահովված մինի բարձր ագրոտեխնիկայով, դրա հետ միասին նաև հողի նորմալ պարարտացումով։

Այդ առթիվ նա ասում ե՝ «... այլ բան ե՝ զարգացնել այգում պատրաստի պտղատու սորտեր (վորտեղ յես անհրաժեշտ

եմ գտնում կիրառել բույսի խնամքի բոլոր կանոնները»։ այլ և ոլողատու բույսի նոր սորտ ստանալը. Այդ յեքու հասկացողությունները չե կարելի շփոթել։

Հիբրիդ բույսը տնկարանում պիտք ե ապահովված լինի լրիվ, անհրաժեշտ ինտերֆուզ հողի մշակմամբ, լուժմամբ, ձևագործմամբ և այլն։



Հ Ի Բ Բ Ի Գ Ն Ե Ր Ի
Է Ն Ց Ր Ո Ւ Թ Յ Ա Ռ Կ Ե Լ

Հաջող տրամախաչումից ստացված վոչ բոլոր սերմերն են տալիս լավորակ տնկիներ: Խնչպես ասացինք, Միջուրինը մեծաշահկություն և տալիս պիտանի հիբրիդների ընտրությանը: Այդ ընտրությունը նա կատարում է չորս անդամ, վորոնցից յերեքը՝ մինչև պտղաբերելը:

Ճիշտ ե, յուրաքանչյուր մասնագետի կամ փորձարարի վերջնական նպատակն ե գնահատել պտղատու բույսը հատկապես պտղաբերության շրջանում, բայց վորովհետեւ պտղատու բույսերը շատ յերկարատե խնամք են պահանջում, շատ կարևոր ե, վոր վոչպիտանի, վայրի հատկանիշներով բույսերը նախորոք խոտանման յենթաքրկին՝ առանց սպասելու պտղաբերության շրջանին:

Այդ նպատակով եւ Միջուրինն իր բազմամյա փորձնական աշխատանքով մշակել ե մի շարք ցուցանիշներ, ըստ վորոնց հնարավոր ե բազական ճիշտ կերպով կատարել պիտանի հիբրիդների ընտրությունն ըստ վեգետատիվ մասերի, այն շրջանում, յերբ բույսը դեռ չի պտղաբերում, Միաժամանակ նա շեշտում է վոր ընտրություն կատարողը պետք ե մեծ փորձառություն ձեռք բերի, կարողանա ճանաչել, անհատորեն տարբերել լավագույն տնկին անմիջապես տնկարանում: Դեպի բույսն ունեցած այդ անհատական վերաբերմունքը բնորոշ է Միջուրինի համար

նըւա աշխատանքի յուրաքանչյուր ողակում, վորը և տարբերում ե նրան մինչ այդ աշխատող բոլոր մասնագետներից: Վեոչ թե բազմաթիվ փորձերից սպասել պատահական բույս, այլ գիտակցորեն կիրասելով սեղեցիոն մեթոդները, պետք ե կարողանալ ուղղել բույսի զարգացումը մեզ պիտանի ուղղությամբ—ասում ե Միջուրինը:

Լավագույն պտղատու բույսերն ընտրելիս, լինեն նրանք աղուց գոյություն ունեցող կամ նոր ստացված, ամենահիմնական հատկանիշներ, ըստ Միջուրինի, պետք ե հասարել՝

1. Պտղների բարձր վորակը (համը, դիմացկունությունը, գույնը, մեծությունը և այլն), 2. բույսի ցրտակայունությունը, 3. դիմացկունությունը հիվանդությունների և վնասառների նկատմամբ, 4. կանոնավոր (յուրաքանչյուր տարի) բարձր բերաւագությունը, 5. վաղ հասակում պտղաբերելը:

Պտղաբերության շրջանում բավական հեշտ, ե ընտրություն կատարեն, սակայն անհամեմատ ավելի բարդ ե բույսի ընտրությունը մինչև պտղաբերման շրջանը:

Հենցելով Միջուրինի բազմամյա աշխատանքի վրա, բույսերի ընտրությունն ըստ վեգետատիվ մասերի՝ կարող են լայն չափով կատարել նույնիսկ մեր փորձարար կուտնահսականների վոչ միայն կուլտուրական, այլ և վայրի պտղատու տեսակների նկատմամբ, վորոնցով հարուստ են Հայաստանի անտառները:

Տնկարանում յերկրորդ յերրորդ ընտրությունը կատարելիս Միջուրինը վրակես դրական հատկանիշներ համարում ե՝ Խնձորենիների համար՝ բույսի նորմալ զարգացումը, բավական հաստ, ուղիղ զարգացած ճյուղավորումը, չվերի թափ վերջավարությունները:

Տերեները պետք ե ուսենան խոշոր և համեմատարար հաստ թիթեղ, տերենակոթը լինի կարծ ու հաստ, թավամազ:

Տննձենիների ընտրությունն կատարելիս, պետք ե նախնառաջ հաշվի առնել առնելի ուժեղ զարգացումը: Միջուրինն առում ե՝ ընդհանրապես առնձնիների մեջ տերեների տակի յերեսի անոթային քնքույց հյուսվածքը տունկի կուլտուրական հատկանիշների ճիշտ ցուցանիշն ե այնպես, ինչպես և տերեների յեղբերի մանը և բութ կտրվածությունը, իսկ ինչ վերաբերում ե ճյուղերի և տերեների թափշությանը, ամռան վերջին, յերբ առումն ընդհատվում ե, թափշամազն աննկատելի յեղանում:

Պետք ե առավելություն տալ այն տնկիներին, վորոնց տերեների թիթեղները համեմատարար խոշոր են, յերկարավուն:

Յերեսի կողմից թիթեղը պետք և ունենա համեմատաբար մուզ-
կանաչ գույն: Տերեակիցները պետք և լինեն խոշոր, յերկարա-
վուն:

Լավ հատկանիշներ են համարվում խոշոր, կլոր տերեարող-
բողբոջները կուլտուրական հատկանիշներին են վերաբերվում
կարճ շվեր և փշեր չունենալը:

Տալիննու ինչ կեռասենու ընարության դեպքում Միջուրինը
դժական հատկանիշ և համարում այն, յերբ հերթիք աերևների
հիմքում կան մեծ քանակությամբ խոշոր գեղձեր, խիս դասա-
վորված բողբոջներ, և տերեւներն ունեն խոշոր, հասար թիթիզ:

Բույսն ամբողջապես պետք և զարդացած լինի, ունենա
համեմատաբար հաստ ճյուղելու:

Միջուրինը հատկապես շեշտում և, թե անհքաժեշտ և հաշ-
վի առնել տեղական սօբտերի առանձնահատկությունները, հատ-
կապես բալենու և կեռասենու, ինչպես և մնացած պտղատու տե-
սակների նկատմամբ:

Սալուենիների ընարությունը կատարելիս Միջուրինը հատուկ
նշանակություն և տալիս «Ռենկլոոդ» կոչված խմբին, վորոն ինքը
լայն չափով ոգասագործել և սելեկցիոն աշխատանքում: Նա առա-
վելություն և տալիս այն անկիներին, վորոնք ունեն ուժեղ զար-
գացած ճյուղեր, բողբոջների խիտ դասավորում, տերեւների կլո-
րածն, հաստ ալիքապոր, մուզ-կանաչ թիթեղները: Դրական նշա-
նակություն ունի տերեւների թավշոտությունը: Տերեւների յիզրե-
րի բութ, ձկածն կտրվածությունը՝ նմանապես դրական հատկա-
նիշ և համարվում:

Միջուրինը լելակի մուենաւ, մօսենու, հաղարենու լավա-
գույն բույսների ընարությունը կատարում և պատղարերության
շրջանում, վորովհետեւ այդ բույսները համեմատաբար վաղ են
պատղարերում, և բույսների ընարությունը կարելի յե կատարել
վերջնականորեն ըստ պտուղների վորակի ու բերքի չափի, հաշ-
վի առնելով այն բոլոր պահանջները, վորոնք առաջադրվում
են յուրաքանչյուր պտղատու բույսի ընարությանը:

Ներկայումս, վորակի վաթսուն տարվա աշխատանքի փայ-
լուն ապացույց, Միջուրինը ավել և նորանոր պտղատու բույսե-
րի ավելի քան 300 սորտ: Դժվար և տալ այդ սոբտերի մանրա-
մասն նկարագրությունը, բայց անհրաժեշտ և կանգ առնել նրան-
ցից գոնե ամենատարածված ձեռքի գրա:



«Կոմսոմոլեց»


ԽՆՁՈՐԵՆԵՐՆԵՐ

1. ԲԵԼՖԼՅՈՐ ԿԻՏԱՑԿԱ

Էյս սորտը հիբրիդ ծագում ունի (ինչպես ցույց է տալիս սորտի անունը), սուացված և ամերիկական «Դեղին Բելֆլյոր» սորտից. «Չինական» խնձորենու փոշիով տրամաժաչելուց:

Ասածին անգամ սորտն ոկտել և պատղաքերել 1914 թվականին, յոթ տարեկան հասակում. առաջին տարիներում պտուղները համեմատարար մանր եյին և մինչև ձմեռ չեյին դիմանում: Միշուրինը պատվաստում և այլ ծառի վրա մի քանի ճյուղ «Բելֆլյոր» սորտից: Խոկ հետագայում նա այդ սորտը պատվաստում և «Ֆունտուկեանոց Անտոնվիլի» խնձորենու վրա, վորից հինգերորդ տարում սուացվում են առաջին խոշոր պտուղները նույն համով, ինչպիսին ունեյին պտուղներն առաջին պատղաքերության ժամանակ: Հետագայում պտուղների վորակը պահպանվում է նույնը:

Պտուղը բավականին խոշոր և, 300—350 գրամ քաշով, ձվաձև, կողապոր, ծածկված վոռկեղույն-դեղին մաշկով, վորն ունի յերկարությամբ տարածված կարմիր գծեր: Միսն սպիտակ և, ունի դուրեկան, քաղցր, մի քիչ թթվաշ համ: Ծառն ուժեղ և զարգացած, շատ դիմացկուն և, ցրտերից չի տուժում նունիսկ ֆորկու, յերկրում, ծաղկաբողբջները չեն տուժում դարնան ցըրտերից:



«ԲԵԼՖԱԾՈՐ ԿԻՏԱՅՎԱ»

Պտուղները հասնում են սեպտեմբեր ամսում, պահպանվում՝ մինչև հունվար-փետրվար ամիսները:

Այս սորտը համարվում է առաջնակարգ և Հայաստանում՝ Անդներականի և Բայազետի շրջաններում արդեն աճում են տեսակափորձի կարգով:

2. ԲԵԼՖԱԾՈՐ ՌԵԿՈՐԴ

Բարդ հիբրիդային ծագում ունի: Ստացված է 1914 թվին՝ Շիլֆլյոր կիտայկա և «Յախոնտովյե» սորտերի տրամախաչումից (յերկու ծնողներն ել հիբրիդներ են): Առաջին անգամ հիբրիդը պաղպարհել է 11 տարեկան հասակում:

Մասն ուժեղ ե աճում, ճյուղերը զարգացած են, լավ են դիմանում քամիներին: Այս սորտն աչքի յե ընկնում բարձր բերքատվությամբ և ցրտադիմացկունությամբ:

Պտուղը կորավուն կոնաձև է, կղում և մոտավորակես 120 դրամ, միան սպիտակ վարդագույն ե, քաղցր-թթվաշ համով, ծածկված և մուգ-կարմիր մաշկով (այդ դույնը ժառանգել է «Յախոնտովյե» սորտից), ունի դուրեկան բուրմունք, ամուր և

միացած ճյուղերին, ուստի քամիներին լավ և դիմադրում: Պտուղները հասունանում են սեպտեմբեր ամսին, գործածելու պիտանի յեն դաւնում դեկտեմբեր ամսից, ըայց լավ պահպանվում են մինչև փետրվար-մարտ ամիսները: Պտուղները փառախառվ չեն վարակվում: Այս սորտն ես համարվում ե գերազանց և աճում և Հայաստանի լեռնային շրջաններում:

3 ՖՈՒՏՈՒԿԵՍԱՌՈ ԱՆՏՈՆՊԿԱ

Այդ սորտը Միջուրինն ստացել է 1888թ. «Մագիլեվսկի Սպիտակ Անտոնովկայի» 5 տարեկան ծառից, վորպես բողբոջային ձևափոխում:

Պտուղը, խնչպես ցույց է տալիս սորտի անունը, բավական խոշոր է, յերկարությամբ սեղմված, գնդաձև, թույլ կողավոր, միջին քաշը մինչև 600 գրամ: Լրիվ հասունացած պտուղն ունի մաշկը մինչև 600 գրամ (սպիտակավուն) գույն, գորի վրա յերեւացում են սպիտակ, խոշոր յենթամաշկային կետեր:

Միսը շատ նուրբ կաղմություն ունի, սպիտակ գույնի, հյութալից, քաղցր ե, դուրեկան թթվությամբ, թույլ բուրմունքով:

Ծառը փարթամ և զարգանում, խիտ ճյուղավորված, տերևներն ունեն լայն թիթեղներ, վորոնցով հնարավոր և ձանաչեալ այդ սորտը նաև մինչ պտղաբերելը:

Պտուղները հասունանում են սեպտեմբեր ամսին, ըայց պահպանվում մինչև դեկտեմբեր: Գործածվում են թարմ վիճակում և վերամշակելու համար: Ծառը ցրտագիմացկուն է, շատ բերքատու, ըայց պետք ե մշակել քամուց պաշտպանված վայրերում, վորովհետև շատ խոշոր պտուղները թույլ են դիմադրում քամիներին: Այս սորտը նույնպես առաջին անգամն ե տնկված Հայաստանի լեռնային շրջաններում:

4. ՄԻՉՈՒՐԻՆՅԱՆ ԲԵՍՍԵՍՅԱԿԱ

Այս սորտն ստացված է 1912 թ. վորպես տեղական «Սկրիժապել» և «Բևսոսեյանկա» սորտերի հիբրիդ:

